

24902

27


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐՈՒ, ՄԻԱՅԵ Ք

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԱԶՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Ո Խ Տ Ա Ց Ա Շ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

ՅԵ. ՄԻԼԻՔ ՅԱՂՅԱՆԻ «1903—1907 թ. թ. Հայուստանի
բանվառական շարժման պատմություններ» գրքի առքիվ



Գևորգ Ղարազյան - 1935.

331.88(47.925)

15 ՅԱՅ 2000. 01

2-46

ԳԵՎՈՐԴ ՂԱՐԱՁՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃԻՌԱՆՆԵՐՈՒՄ

ՈՒՇԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ

ԸՆ. ՄԵԼիք Ծովոսին «1903—1907 թ. թ. Հայոստանի
բանկուական շարժման պահմարդութից» գրքի առիվ

15/1/2

Տեսելու 1935.

Ա/13

Գլուխիսի լիազոր №193.
Գատվեր №130. տիրաժ 1000
Կուռքատի տպարան, Յերևան 1935.



54121-66

ГЕОРГИЙ НАРАДЖЯН
(С. Т. АРКОМЕД)

В ТИСКАХ ПАРТИЙНО—
ПОЛИТИЧЕСКИХ ЗАБЛУЖДЕНИЙ
(По поводу книги Мелик—Елчяна,
«Рабочее движение в Армении в 1903—1907 г. г.»)

Типография Партиздата
Эривань, 1935 г.

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Այս իմ «ուշացած պատասխանը» գրված ե 4 տարից ի վեր:
Հազառակ գործ դրած ամեն շանքեթին, ինձ անհնարինյեղավ այս
մինչեւ այժմ լույս ընծայել Կարդալով այս իմ «պատասխանը»
ընթեցող հասարակությանը կտենի, վոր խորհրդային իշխանու-
թյան որերին գտնվում են, լնջակես մեր հասարակական-մշտեսա-
կան կյանքի այլ յեկ այլ ընագավառներում, այնպէս ել գրականու-
թյան ասպարիզում գրչի մարդիկ յեկս, վորոնք թույլ են տախս
թօնց խախտելու «ենդափոխական որինականությունը», ծառայեց-
նելով գրեթ կողմանակի այլ յեկ այլ նպատակներին յեկ հաշիվսե-
րին յեկ վոչ համենայն դեպու գրականության շահին:

Այդպիսիներից մեկի մասին խոսում ե ներկա իմ աշխատու-
թյունը:

1935 թ. փետրվ. 28, Եկեղեցան

Դ. Օ.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

(Մ. Յովյանի գրքի տոքիվ)

Մելիք-Յովյանի «Հայաստանի բանվորական շարժ-
ման պատմությունից 1903—1907» գիրքը լույս տե-
սավ Հ.Ս.Խ.Հ. Պետհրատի 2-րդ հրատարակությամբ և
նոր ընդարձակ առաջարանով՝ 1924 թ. «Խորհրդային
Հայաստանի» 262, 263 և №-ում յես առիթ ունեցա այդ
գիրքը մանրամասն քննության յինթարկելու, ցույց
տալով նրա թերությունները և արժանիքները:*)
Գրական այդ աշխատության վերլուծման յես մոտեցա
ինչպես վայել եր, միանգամայն որյիկտիվորեն, առանց

*) Վերիպակմեր

«Խ. Հ.» № 262, 1924 թ.	Տպված է	Պես ելինի
Սյունյակ	Սերբիայի	Սիբիրե
»	պատմական	պատահական
»	սացիալ-քե-	սոցիալ-տնտե-
»	մոկրատական	ոական
»	գտնվում են	գտնվում ելին
»	քաղաքային-	ադրաբային-
	ազրաբային	քաղաքական.

վորեւ յետին մտքի և կանխակալ կարծիքի: Սակայն հիդինակը ի՞նչ մեղքեր ասես չե զերագրել ինձ իր առաջարանում: Նա առանց քաշվելու գրում ե, վոր «Խորհրդային Հայաստան» թերթում յես «վաղեմի մենշևիկս» շատ հարմար առիթ եմ ունեցել ծառայեցնելու նրա գիրքը բաղաժական յելալյրի (ընդգծումն իմն ե. Գ. Ղ.), մի անգամ ևս պաշտպանության տակ առնելու Անդրկովկասի մենշևիզմի անցյալը, հրապարակ հանելով մենշևիկյան արսենալից անցյալ պայքարի ժանդուած բոլոր արգումենտները: Տեսնում եք, «Խորհրդայաստան» կոմունիստական թերթի խմբագրությունն այնքան կույր ե յեղել վոր չե հասկացել իմ «քաղաքական յելույթի» իմաստը, իսկ Մ. Յոլչյանն ե միայն, վոր իր խորաթափանց իմաստությամբ ըմբռնել ե իմ «մենշևիկյան քաղաքական յելույթը և պայքարի մենշևիկյան ժանդուած բոլոր արգումենտները»: Այս ամբաստանական նախերգանքից հետո, նա ի՞նչ տեսակ գրական անվայել պրիոմների ասես չե դիմում:

Ճշմարիտն ասած, յես անուշադրության կմատնեյի Մ. Յոլչյանի սանձարձակ յելույթը. բայց նա՝ մենակ չե: Իրենց մեծամտությամբ, հոխորտանքով, հերկուլէսյան չափերի հասած տղիտությամբ և վոր գլխավորն ե իրենց անպատճախանատու արարքներով՝ Մելիք Յոլչյանների ներկայությունը այսոր առանձնապես աչքի յե զարնում մեր հասարակական իրականության մեջ, այնպես վոր յես հարկադրված եմ, զրիչս առնելով ձեռքս, ցույց տալ Մ. Յոլչյանին իր համեստության սահմանները:

Նախ և առաջ պետք ե նկատել վոր գիրքը Հրատարակությամբ լույս ե տեսել շատ աննշան փոփո-

խություններով: Այս նոր հրատարակության մեջ աչքի ընկնող նորությունն այն ե, վոր հեղինակն իր գիրքը զարդարել ե Ասատուր Կախոյանի մի նոր պատկերով և ինձ ուղղված հայհոյանքներով ու ամբաստանություններով լի՝ 12 եջից բաղկացած մի առաջարանով:

Քննենք մի առ մի այն հարցերը, վորոնք առիթ են տվել Մ. Յոլչյանին իր իսկ վոր գիրքին «քաղաքական յելույթի» համար:

Այդ հարցերիցն ե՝ վիճակագրության հարցը պատմական աշխատության մեջ: Ինկատի առնելով, վոր հեղինակը իր փոքրածավալ աշխատությունը (133 յերես) ծանրաբեռնել եր բաղմաթիվ աղյուսակներով և վիճակագրական տվյալներով՝ յես գրել ելի, վոր դա անհարմար, անտեղի յե և միանգամայն հոգնեցուցիչ միջին վորակի ընթերցողի, ել չենք ասում բանվոր ընթերցողի համար, վոր յեթե անհարմեշտ և սպատմական վորեւ եպոխա հիմնավորել տնտեսական զարգացման ընթացքով, տալ այդ նպատակով թվեր ու փաստեր, դրա համար կա վորոշ սահման, վորից անցնել պատմագիրը չե կարող և վոր վնրջապես այդ ստատիստիկական թվերն ել շատ քիչ դրական բան կարող են տալ նախ՝ այն պատճառով, վոր նրանք շատ կասկածելի աղբյուրներից են, յերկրորդ՝ վորպես հին ռեժիմի կառավարության պաշտոնական ստատիստիկա՝ պատահական ե, կցկուուր, անսիստեմ, զուրկ բոլորովին ստատիստիկայի դիտական հիմունքներից, հետևապես նրանց մեծ ժլատությամբ պետք եր ոգտագործելու: Ի՞նչպես և ի՞նչ և պատասխանում Մ. Յոլչյանը այս տարրական, պարզ հասկացողության դեմ:

«Շեցենզենտը, գրում ե նա, առաջադրում ե մեղ դուրս ձգել արդյունագործության զարգացման և սուցիալական տարրեր շերտավորման վերաբերյալ թվական տվյալները»:

Այդպիսի բան ամենեին չեմ ասել. միայն ասել եմ, վոր գորոշ չափ ու սահման կա և վոր ընկղմիերով տնտեսական-ազգարային հետազոտությունների մեջ, հեղինակը ձգտել ե իր աշխատության «գիտական» բնույթ տալ իսկ տնտեսական-ազգարային գիտական հետազոտությունները յերկիրը հետազոտող տնտեսագետների և այլ մասնագետների գործը պետք ե համարել։ Այսուհետեւ Մ. Յոլչյանը մի առանձին պարծենկությամբ հայտնում ե, վոր «մեր յերկրի և ժողովրդի եկոնոմիկայի «իտոգները» ճշտելու համար գրեթե վոչինչ չե արված» և քանի վոր «Անդրկովկասի քաղաքական շարժումների լուսաբանության նվիրված մարքսիստական վոչ մի աշխատություն անզամ հարեւ վանցորեն չի մոտեցել այդ «իտոգները» վերականգնելու պրոբլեմին», հետևապես ինքն առաջինն ե, վոր զգալով այդ անհամեշտությունը կիրառել ե այդ մեթոդը, վորպես ռուղղափառ մարքսիստ պատմագետ։ Տեսնում եք ինչ հավակնուու լեզու ունի մեր հեղինակը . . . : Բայց ախր նրան ասում են, վոր ձեր առաջ բերած թվերը, աղյուսակները կասկածելի աղյուրներից են, գրեթե արժեք չունեն, դուք նրանց ժամանակամբ պետք ե ոգտագործելիք։ Միանգամայն անուշադրության մատնելով այս բոլոր առարկությունները, նա այնուամենայիվ, առաջ ե անցնում և «մարքսիստական պատմագետի» տոնով հայտարարում ե, վոր «մարքսիստական գրականության մեջ Ղարա-

ջյանի վերոհիշյալ տեսակետը բաժանող հազիվ մեկ ուրիշը գտնվի»։ Ճի՞շտ ե ասում արդյոք. վոչ, վերցնենք շատ որինակներից միայն յերկուսը.

Վ. Նեփակու «Օւերքն ու պատրիարքները» մեծածավալ գրքում, *) վոր բաղկացած ե ավելի քան 600 յերեսից շատ ավելի պակաս վիճակագրական տվյալներ և աղյուսակներ կան, քան Մ. Յոլչյանի գործը ծավալ 133-յերեսից բաղկացած գրքույկում, նույնը պետք ե ասել և ֆ. Մախարաձեյի գրքի մասին, վոր բաղկացած ե ավելի քան 400 յերեսից։ **)

Հիշյալ մեծածավալ աշխատություններն ավելի պատրաստված, բարձր վորակի ընթերցողի համար են, քան Մ. Յոլչյանի գրքույկը. այս բանը կարելի չե ժխտել. Յես վախենում եմ այս իմ կարծիքը նա նույնպես «մենշևիկյան» հայտարարեւ և կատաղորեն բողոքենրա զեմ։ Շատ հավանական ե, վորովհետեւ նա, լցնելով իր գրքի եղերը ավելորդ և միանգամայն անտեղի վիճակագրական աղյուսակներով և թվերով, ցանկացել ե, ինչպես արդեն նկատել եմ, իր փոքրիկ աշխատությանը «գիտա-հետազոտական» բնույթ տալ, մի ապարդյուն փորձ, վոր միանգամից ընթերցողի աչքն ե ծակում։ Կերջապես, պետք ե գիտենալ վիճակագրությունը, թվական տվյալները տեղին և ժամանակին ոգտագործելը

Հիշյալ մեծ աշխատությունների հեղինակները, տալով համառուսական և համակովկասյան տնտեսական շարժման պրոցեսի նկարագիրը, տալիս են դրա հա-

*) տես Բ. Նևскиի «Օչ. ու պտ. ՐԿՊ(6.)» տօմ I, 1924 թ.

**) Փ. Մախարաձե «Օւերքն ու պատրիարքները» մեծածավալ գրքում, 1927 թ.

մապատասխան տեղին պատշաճ թվեր, մինչդեռ Մ. Յոլչյանը, բացի այն, վոր ինկատի յև ունեցել Անդրկովկասյան յերկրի մի փոքրիկ մասնիկը —այժմյան Խորհրդային Հայաստանի տերքիառօրինան, իր գրքույկը ծանրաբեռնել ե մեծ մասամբ անիմաստ, անհիմն, դրական շատ քիչ արժեք ունեցող թվական տվյալներով, վեճակագրական բալլաստով:

Խոսքը միայն սրա մասին ե և վոչ թե կողմնակի այնպիսի բաների մասին, վորոնք ամենեին կազ չունեն հարցի հետ:

Զարմանալի արամաբանական շեղումներ ե հայտնաբերում Մ. Յոլչյանը: Նա ամեն անդամ խուսափում ե հարցին ուղղիլ պատասխանելուց և դիմելով գրական անվայիլ պրիորների, հարցին միանգամայն չվերաբերող կողմնակի դասողությունների, ջանադիր ե լինում «Հերքելու» հակառակորդին:

Այսպես ե վերաբերում նա իմ այն դիտողությանը, թե նրա աշխատությունը «սպեցիֆիկյան» տպակորություն ե թողնում: Հարցը դրել եյի շատ պարզ և վորոշակի: Ամենքին հայտնի յե, վոր կովկասում հայքանվորական շարժման ծագումն ու զարգացումը տեղի յե ունեցել վոչ թե Յերևանում, Ալեքսանդրապոլում կամ Ղարսում, այլ Անդրկովկասյան յերկրի արդյունագործական կենտրոններում —Թիֆլիս, Բագու, Բաթում և յերկաթուղային ռայոններում, հետեւապես հեղինակը սահմանափակվելով ներկա Խորհրդ, Հայաստանի տերը իտորիայի շրջանակներով՝ անտեսել ե այդ իրողությունը և հարկ չե համարել մի առանձին գլուխ հատկացնել հիշյալ վայրերի բանվորական շարժումներին և ապա թե անցնել ներկա Խորհրդ: Հայաստանի (նախ-

կին Յերևանի նահանգի մի քանի հայաբնակ գալառ՝ ների) սահմաններում տեղի ունեցած շարժումների նկարագրին:

Անզոր լինելով այս արգումենտացիայի դեմ հիմնավոր մի բան ասելու, Մ. Յոլչյանը սկսում է հայույթի նա հայտարարում և «չարամիտ» դիտավորության արդյունք նրան սպեցիֆիկյան ուղղության վերագրումը: Նա մտքի հավասարակշռությունն այն աստիճան կորցնում ե, վոր հիշյալ որինական և հիմնական պահանջը նա անվանում է «համահայկական ողիող» առաջարկ: Համարել այդ առաջարկը «համահայկական ողիող», նշանակում է սպեցիֆիկյան մտայնության գերի լինել:

Միթե «համահայկական ողիող» գործ պետք ե համարել այն, վոր նա իր գրքի մի քանի եջերը նվիրում ե հայ սոցիալ-դեմոկրատական մամուլին, — «Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կովկ», «Կայծ», «Նոր-խոսք», «Հոսանք», «Շավիղ», «Որել» և այլն). չե վոր այդ թերթերը հրատարակվել են Թիֆլիսում, Բագրում և վոչ թե Յերևանում կամ Ալեքսանդրապոլում և նրանց դեկավար ընկերների ու դ. գրական-հրապարակախոսական գործունեյությունը, վորը հայ բանվորական շարժման և իդեոլոգիական զարգացման անբաժան մասն է կազմում, արտահայտվել եներկա Խորհրդ: Հայաստանի սահմաններից գուրս՝ Անդրկովկասի հիշյալ քաղաքներում: Նա խոսում է մինչև անգամ սպեցիֆիկներից և նրանց ծագման և գործունեյության մասին, վոր տեղի յե ունեցել ներկա Հայաստանի սահմաններից գուրս: Նա առիթ չե բաց թողնում խոսելու նույնպես հնչակյանների և դաշնակցականների արտա-

քին գործունեյության մասին։ Միթե այս բոլորը շհամահայկական ողիողա պատմություն եւ Զեզ չեն ասել յերբեք և չեն ասում, վոր դուք զբաղվեյիք «համահայկական»-նորանախիջնանի, Սիսիկերոպոլի, Կրասնոդարի, Գրոզնայի (այս վերջինի անունը տալիս ենույնիսկ ինքն հեղինակը. Գ. Դ.) և այլ շարժումների նկարագրով, այլ վոր դուք սպեցիֆիկյան մտայնության անճարակ գերի լինելով, միանգամայն անտես եք արել մեր Անդրկովկասյան յերկրի բանվորական ս. դ. շարժումը, առանց վորի նախկին Յերևանյան նահանգի մի քանի գավառների (ներկա Խորհրդ. Հայաստանի) սահմաններում հայ բանվորական քաղաքական շարժման գարգացմումն ըմբռնել կարելի չե։

Սակայն նա բերում են հետեւյալ «ջախջախիչ» արգումենտը. «Միթե Ռահիմ Հուսեյինովի «Հեղափոխական շարժումը Ազգբեյջանում», Կալանտաձե-Միսեյի «Հեղափոխական շարժումը Գուրիայում» և «Այերա»-ի հրատարակած «Բանվորական շարժումը Թիֆլիսում» ըստ անհասկացողությունը կամ գիտությամբ մոլորության մեջ եղանակ բացում ընթերցողին. Հիշյալ աշխատություններ են և նրանց հեղինակներ՝ հայ սպեցիֆիկներ», բացականաչում են Մ. Յոլյանը, Այստեղ ել ցույց ետալիս նա կամ իր անհասկացողությունը կամ գիտությամբ մոլորության մեջ եղանակ բացում ընթերցողին. Հիշյալ աշխատություններն ամեն չեն Մ. Յոլյանի աշխատությանը. վերջինս խոսում եմ յերկրամասի «Բանվորական շարժման պատմության» մասին, մինչդեռ Հուսեյինովի «Очерки революционного движения в Азербайджане» աշխատությունը խոսում է Ազրբեյջանի հեղափոխական շարժման մասին ընդհանրապես (անցողակի կերպով մի քանի տող ել նվիրում են Գեղարե-

կի հանքագործ բանվորներին *), իսկ Կալանատձե-Միսեյինովի զրքույկը խոսում են Գուրիայի գյուղացիության ագրարային-հեղափոխական շարժման մասին։

Ուրիշ բան եմ յերկրի կամ նրա մի մասնիկի (նահանգի, գավառի) հեղափոխական շարժումը և միանգամայն ուրիշ, տարրեր բան, յերբ խոսվում երանցորդական շարժման մասին, վորը միջազգային տարծում ե։

Իսկ ինչ վերաբերվում ե «Рабочий разведчик»-ի «Բանվորական շարժումը Թիֆլիսում» փոքրիկ բրոցութին, նրա հեղատակումը հարցին միանգամայն չվերաբերող անհեթեթ մեջբերում ե նշանակում, վորովրետու ինչպես Թիֆլիսի, այսպես ել Խարկովի, Մոսկվայի, Պետերբուրգի կամ վորևե այլ քաղաքի բանվորական շարժման մասին կարելի յե զրել առանց զրահամար մեկին «սպեցիֆիկմի» մեջ մեղադրելու։ Ներկայումս չկա յերկրագնդիս յերեսին արդյունագործական մի կենտրոն, մի քաղաք, վորտեղ գտնելինք բանվորական զուտ ազգային բնակչությունն. հետևապես նման աշխատության հեղինակը անպայման հարկադրված կլինի միջազգային բանվորական շարժման պատմությունը գրելու. «Рабочий разведчик» (Արտեմ Տեր Հարությունյանի) հիշյալ զրքույկը հենց այդպիսի բնույթ ե կրում. Յեթե անգամ մի քաղաքում զուտ ազ-

*) Հուսեյինովի Ազրբեյջանի հեղափոխական շարժման վերաբերյալ այդ պատմությունը տարօրինակ եջեր ե պարունակում իր մեջ. Նարի, Քյարամ և այլ այսպիսի հայտնի դաշտազների (ավազակների) ավազակային հերոսական գործունեյությանը. «Հեղափոխական» բնույթ հատկացնելով թուրք գյուղացիության ազգային շարժման արտայայտություն ե համարում»...

գային կազմով բանվորական բնակչություն լինի, այդպիսի հազվագյուտ դեպքում այդ քաղաքի բանվորական շարժման վերաբերյալ աշխատության մասին «սպացի-ֆիկյան» կամ «ըունդական» խոսք չե կարող լինել քանի վոր ազգային շրջանակներում տեղի ունեցող բանվորական շարժումը չի կարող միջազգային շարժման բնույթ չունենալ կամ չստանալ յեթե մոռացության չե տրվում այն անժխտելի իրողությունը վոր միշտ և ամենուրեք տեղական բանվորական շարժումների վրա միջազգային բանվորության ազդեցությունները բնական և անխուսափելի յեն լինում: Սակայն այս բոլորը Մ. Յոլչյանի կողմից մոռացության և արք վում, այդ պատճառով նա սպեցիֆիկյան հակումներ ունեցող մի հեղինակ և հանդիսանում, վորքան ել նա այդ բանի դեմ ցասկոտությամբ ծառանա և շարունակե նրանի հոգակներ ճոճել:

Ընկ. Աշ. Հովհաննիսյանը անվերապահորեն իր պաշտպանության տակ և առնում Մ. Յոլչյանի աշխատությունը^{*)}): Նա ասում ե, վոր վոչինչ սպեցիֆիկյան չկա այդ աշխատության մեջ, քանի վոր նրա հեղինակը բանվորական շարժումը «ազգային» շրջանակների մեջ չի դրել այլ «տերրիտորյալ» շրջանակներում, այսինքն ներկա Խորհը. Հայաստանի տերրիտորիայի սահմաններում: Հենց դրանում ե կայանում աշխատության սպեցիֆիկյան մեթոդը, վոր հեղինակն անտես ե արել Անդրկովկասի արդյունագործական կենտրոնների բանվորական շարժման ազդեցությունները, առանց

*) Տես նրա հոդվածը «Զամ պանիկյորության հայկական մի վարկանուի մասին», «Մարտակոչ» № 68, 1927

վերոնց նախակին Յերևանյան նահանգի մի քանի վայրերի բանվորական շարժումը կմնար պատմականորեն անհայտ: Հեղինակը կարող եր, իհարկե, զրել մի գավառի կամ քաղաքի բանվորական շարժման մասին, առանց վոր մենք իրավունք ունենայինք նրան այդ բանի համար ընկ. Հովհաննիսյանի խոսքով ասած—«գավառամտության» կամ «քաղաքամտության» մեջ մեղադրելու. բայց յերբ մի գրող այդ դեպքում միանգամայն անտես և անում տեղական շարժումների վորոշիչ և մղիչ ֆակտորների ազդեցությունները, այն ժամանակ մենք հիմք ունենք խոսելու նրա մտային հորիզոնի սահմանափակ լինելու մասին: Յես ասել եմ և շարունակում եմ պնդել, վոր նախակին Յերևանյան նահանգը կազմող մի քանի գավառների (Ներկա Խորհըք. Հայաստանի տերրիտորիայի) սահմաններում անցյալում տեղի ունեցած բանվորական շարժումը սերտ, անխվելի կերպով կապված և Անդրկովկասի արդյունագործական կենտրոնների վրացի, ոռւս, հայ, հրեա և այլ բանվորների, այսինքն միջազգային բանվորության շարժումների հետ: այդ պատճառով ով ուզում ե մի յերկրամասի, ներկա դեպքում Խորհըք. Հայաստանի տերրիտորիայի սահմաններում տեղի ունեցած բանվորական շարժումների պատմությունը գրել նա պետք ե անհրաժեշտաբար ինկատի առնե այդ կապը, այդ տղությունները, հատկացնելով նրանց մի առանձին գլուխ և կամ զրելով մի ներածություն այդ առթիվ: Ահա թե ինչ ե յեղել մեր պահանջը: Լույսի պես պարզ ե, վոր Յերևանում, Ալեքսանդրապոլում, կամ Ղարսում չե վոր մենք պետք ե փնտունք մեր բանվորական քաղաքական շարժումների սկզբնավորությունը և զար-

կացնեմը, այլ Անդրկովկասի արդյունագործական կենտրոններում, վորտեղից և տեղական աննշան իներտ ուժերն իմպուլս սուանալով՝ ընդհանուր միջազգային բանվորական շարժման մեջ են առնվել:

Խոռք չի կարող լինել վոչ այնքան քչայաստանի սահմաններից դուրս գործող առաջին հայ մարքսիստների («հայ գործիչների», ինչպես Մ. Յոլչյանն ե զրուց լիբերալին հատուկ լինվով) մատուցած ծառայությունների մասին» (Աշ. Հովհաննիսյան), վորքան Հայաստանի սահմաններից դուրս տեղի ունեցած այլազգի և հայ բանվորական շարժումների մատուցած ծառայությունների մասին, առանձնապես Անդրկովկասի արդյունագործական կենտրոններից Յերևանյան նահանգի գավառներն անցած ավելի կամ տակաս դիտակից հայ բանվորների մատուցած ծառայությունների մասին, վորոնք ավելի սու լինելով իրենց ծննդավայր յերկրի բանվորական մասսաների նրան ու կացին, սովորություններին և ծանօթ նրանց լեզվին՝ բնականապես կարող ելին ոտարազգի գիտակից բանվորների աշակցությամբ մեծապես ներգործություն ունենալ նրանց վրա: Ահա թե ինչ մոտիվներ են դրդել մեզ այդ դիտողությունը գրելիս: Միթե կարծում եք, վոր սպեցիֆիկմի մեջ կարելի յե մեղադրել միայն նրան, վորը բացառապես «ազգային շրջանակներով» ե սահմանափակում: Վաչ, «ազգային շրջանակներով» չե միայն վոր սահմանափակվում ելին հրեյական Բունդը, հայ սպեցիֆիկները կամ վրացի մեսամեղասիստները, վորոնց կարելի յե ընդհանուր առմամբ վրացի «սպեցիֆիկներ» համարել այլ նաև նրանք տերըթորյալ (ազգային) սահմաններում ձգտում ելին սոցիալական (բան-

վորական) շարժումը ոգտագործել ազգային նպատակների համար, ստեղծել ազգային բանվոր դասակարգի հեղինակաց ազգային հարցին լուծում տալու համար: Մատարելեցիք վրաց ս. դ. «ավտոնոմիստներին» (Դարչիսաշվիլին և նրա համախորհներին), վրացի «մեսամեղասիստներին» ընդհանուրապես, վորոնցից մեծագույն մասը մի քանի տարուց հետո հարեցին «մենշևիկյան» հոսանքին, իսկ 1917-18-19 թվականներին փորձեցին իրանց վաղուց ի վեր տեսչած իրատեսակ «ազգային հարցին» տալ լուծումն վրաստանի ազգային քաղաքական «անկախության» պայմաններում:

Յես այն համոզունքին եմ յեկել վոր փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների շրջանում վրացի ս. դ. մենշևիկների քաղաքականությունը ազգային հարցում հետևողություն եր հրեական «Բունդ», հայ «սպեցիֆիկների» և նույնիսկ հայազգի դաշնականականության:

Զարմանալին այն ե, վոր ընկ. Աշ. Հովհաննիսյանը և մանավանդ Մ. Յոլչյանը միանգամայն լուսությամբ են անցնում իմ այն հիմնական արգումենտները, վորոնցով հաստատվում եր Մ. Յոլչյանի աշխատության սպեցիֆիկյան ուղղությունը: Յես հարցը դրել եյի շեշտակի, 1. ինչպես կլարիվ հեղինակը, յեթե Ալլահշահարդին, վորի պղնձահանքին և բանվորության շարժումներին զրգում հատուկ մի զլուխ և նվիրված գլուխ վոչ թե Խորհրդ: Հայաստանի, այլ Վրաստանի խորհրդային պետության սահմաններում. 2. ինչպես հասկանալ հեղինակին, վորը խոսելով Ալլահվերդու և Ղաթարի պղնձահանքերի մասին, մի քանի խոռք չե նվիրում Գեղարեզի (Սիմենսի) ամենանշանավոր պղըն-

ձահանքին, վորտեղ դեռ 80-ական թվականներից բանվորական մի գաղութ եր հիմնվել և բանվորների (մի քանի հազար) խոշոր տոկոսը կազմում եյին հայ բանվորները. 3. Միթե Բագվի և Թիֆլիսի պրոլետարական շարժումները պետք ե վերագրել Աղբբեյջանի և Վրաստանի քաղաքական պատմության, վորովհետեւ Բագուն գտնվում ե այժմ Աղբբեյջանի և Թիֆլիսը Վրաստանի պետական սահմաններում. Այս հարցերի պատասխանը ընթերցողը չլսեց վոչ ընկ. Հովհաննիսյանից և վոչ ել նրա պղոտեմեյից: Սակայն ընթերցողը կդառն ե այստեղ մեր պատասխանը այդ հարցերին:

Վերջապես գալիս ենք կերասինի հարցին, վորն առանձնապես բորբոքել ե Մ. Յոլջյանի լերդն ու թոքը: Տեսնենք դա ինչ «նազլ» ե:

Նա զրում ե, վոր Յերևանի շուկա ներմուծած ապրանքների աղյուսակը իրենը չե, այլ նա վերցրել ե տնտեսագետ Դանիլովիչի «Արակեսկայ քառուս» աշխատությունից և խույս տալու համար ապրանքների ամբողջ աղյուսակը մեջ բերելուց՝ սահմաեափակվել ե ասելով թե այդ «ներմուծածի մեծ մասը գործարանային ֆաբրիկատ ե, ապա կերասին, յերկաթ, շաքար և այլն»: Այդպիսով մեղքը դրվում «տնտեսագետ» Դանիլովիչի վրա: Այդ բանը ստուգելու համար յես ձեռքիս տակ չունեմ Դանիլովիչի հիշյալ աշխատությունը: Յեթե իրոք «հյուսիսից (Ռուսաստան՝ Բագուն)՝ Աղստափա շոսեյով՝ ներմուծած ապրանքների հետ*»): Նա համարում ե նաև «կերասինը» Ռուսաստանի կենտրո-

* Տես Մ. Յոլջյանի գրքի 1 ին հրատ. յերես 13, իսկ 2-րդ հրատ. յերես 8, 9

նական կապիտալիստական բուրժուազիայի արտադրության և առեւտրի առարկա, ապա պետք ե ասել վոր այդ Դանիլովիչը մի գատարկամիտ, ժողովրդական լեզվով «ախմախ» տնտեսագետ ե: Յերկրորդ՝ յեթե նրա աշխատությունից ե առաջ բերված կերասինի և մյուս ապրանքների («Փարբիկատների») թվարկումը, այդ գեղքում ուրիշի խոսքերը պետք եր, ինչպես սովորաբար անվում ե, չակերտների մեջ դնել: Այդ չե արել Մ. Յոլջյանը, հետեւապես յես և թե ամեն մի ընթերցող հիմք կարող եր ունենալ վերապրելու «հյուսիսից (Ռուսաստան՝ Բագուն)՝ Աղստափա շոսեյով» Յերևանի շուկա ներմուծած կերասինը» հենց իրեն՝ Մ. Յոլջյանին: Այդպիսով «կերասինի» այդ հարցը ուրիշ մի շարք ապացույցների հետ բավականաշափ հիմք ծառայեց ինձ գրելու, վոր «Մ. Յոլջյանի գրքից սպեցիֆիկմ և բուրում»:

Ենս շարունակում եմ այսոր ել պնդել վոր Մ. Յոլջյանի աշխատությունը վոչ այլ ինչ ե, բայց միայն սպեցիֆիկյան մտքի արտադրություն:

Արժե այստեղ գարճյալ մի քանի խոսք ասել մեր յերկրում ուստական կապիտալի կատարած դերի մասին, վորի վերաբերմամբ Մ. Յոլջյանը նույնպես շփոթե տարտամ ըմբռնումն ե ցուցադրում:

Ինչպես յես զրել եյի, գա բարդ և վիճելի հարց ե. սակայն Մ. Յոլջյանի գրչի տակ այդ հարցը, ինչպես և բոլոր բարդ հարցերը, շատ հեշտ և արագ լուծումն են ստանում: Երան չեն ոդնի վոչ Կասյանից և վոչ ել Լենինից առաջ բերած քաղվածքները: Կասյանի և թե Լենինի գրածը ուստական կապիտալի մասին կարելի յե միայն հասկանալ վորպես տենդենց, վորպիսի տենդենց

ունի և չե կարող չունենալ ամեն մի կապիտալիստական բուքուազիա:

Կասյանի ասածը թե «ամենահզոր ինքնակալության տնտեսական քաղաքականության այբուբենն եր բուն Ռուսաստանի և Անդրկովկասի փոխարարելությունները հաստատել գաղութային շահագործության հիմքերի վրա», «Անդրկովկասը, վորպես գաղութ, պարտավոր եր սպառել Ռուսաստան-մետրոպոլիայի ֆարբիկատները» ճիշտ ե, ի՞արկե, վորպես տենդենց, բայց ասել թե նույն «ինքնակալությունը Անդրկովկասի շահանդանում և ոռու առևտրաարդյունագործական կապիտալի բացառիկ (ընդգծումն իմն ե. Գ. Ղ.) սեփականություն»՝ ճիշտ չե, ճիշտ չե, վորպի հետև նույն ինքնակալությունը յեվրոպական կապիտալին, վորի ձեռքումն ե յեղել գերազանցապես մեր յերկրի շուկան մի քանի տասնյակ տարիների ընթացքում, ավելի մեծ թևեր եր տալիս և տփել ե, քան «ազգային բուրժուազիայի» կապիտալին: Ուսար կապիտալի (անդրկական) շնորհիվ մեր յերկիրն ունեցավ առաջին անգամ 1872 թվին յերկաթուղի-Փոթիից-Թիֆլիս և ապա մի տասնյակ տարուց հետո, Բաթումից-Թիֆլիս-Բագու: Իսկ թե ինչ նշանակություն ունեցավ մեր յերկրի արդյունագործության և հասարակական գարգացման համար Անդրկովկասյան յերկաթուղագիծը, այդ բանը հայտնի յի այսոր ամենքին: Այնուհետև ուսար կապիտալները ըսկում են ներս խուժել մեր յերկիրը. արդյունագործության և առևտրի շահագործման համար հրաշալի ասպարեղ են գտնում նրանք մեզ մոտ: Ռուսական կապիտալը, յեվրոպականի հետ համեմատելով՝ աննշան դեր է խաղացել մեր յերկրում: Ցարական կառավարությունը

մեծամեծ արտօնություններ տալով ընդառաջում եր առավելապես յեվրոպական կապիտալին: Թեև նա յերբեմն «ազգային կապիտալին» աշխատում եր նույնպես սուբսիդյաներով և այլ միջոցներով գրավել դեպի կովկաս, բայց դրանից շատ բան չեր դուրս գալիս: Ռուսական կապիտալիդմի անբավարար դարգացումը մի կողմից, հին ուժիւմի կառավարության հակասական տնտեսական քաղաքականությունը «ազգային բուրժուազիայի» նկատմամբ և զերթե բացարձակ ընդառաջումը ոստար կապիտալներին մյուս կողմից, դարձնում եյին մեր յերկիրը յեվրոպական կապիտալների շահագործման համար ծայր աստիճան շահավետ որյեկտ:

Հին կառավարությունը դեգերում եր տնտեսական հակասությունների մեջ: Նա նույնիսկ խոչընդուներ եր հարուցանում իր բուրժուազիայի դեմ: «Ինքնակալությունը, ասում ե ընկ. Կասյանը, ի նկատի ունենարով իր սեփական շահերը, կամա—ակամա խօչընդունում եր (ընդգծումն իմն ե. Գ. Ղ.) բուրժուազիայի շահերի դեմ:*

Լենինը գրում ե, վոր «ոռուսական կապիտալիզմը ստեղծաւ եր իրեն ուլիս (Կովկասում) իր գործարանների համար»: Բայց ոչ ե հերքել և կարող ե հերքել այդ բանը: Հարցը միայն նրանումն ե, վոր ոռուսական կապիտալը համեմատելով ոստար (անդրկապիտակների, զվերացիների, բելգիացիների, ֆրանսիացիների) և տեղական կապիտալի հետ չե խաղացել մեր յերկրում այն

*) Տես. Ս. Կասյան «Ռուսական ինքնակալության քաղաքանությունը Անդրկովկասում», «Նորը», № 3, 1923, յերես 123.

գերը ինչ վոր պատմականորեն վերապահված եր նրան խաղալ և վոր ոռւսական բուրժուազիան, շնորհիվ ցաւ րական կառավարության հարուցած խոշնդոտների, չեր կարողանում «ծայրագավառների վերաբերմամբ իր տնտեսական գաղութային քաղաքականությունն անարգեր լայն չափերով կիրառել»:

Ահա թե ինչ ե գրում Վ. Ի. Լենինը կապիտալիզմի զարգացման մասին Ռուսաստանում. «յիթե համեմատել հասարակական տնտեսական զարգացումը կապիտալիզմի որով զարգացման այն տեմպի հետ, վոր հնարավոր կարող եր լինել ընդհանրապես, յեթե մենք կանգնած լինելինք ժամանակակից տեխնիկայի և կուլտուրայի մակարդակի վրա, ապա կապիտալիզմի զարգացման ներկա ընթացքը Ռուսաստանում իրոք պետք ե համարել դանդաղ: Յեկայտ այդ զարգացումը չե կարող չլինել դանդաղ, քանի վոր կապիտալիստական յերկու ներկա դանդաղ և վոչ մեկում չե պահպանվել հին աշխարհի հետ կապված այնքան շատ հիմնարկություններ (ինչպես Ռուսաստանում, Գ. Դ.) վորոնք վորպես կապիտալիզմին անհամատեղելի (ոչօվամական) հիմնարկություններ, կասեցնում են նրա զարգացումը, անչափ վատթարացնում արտադրողների գրությունը, արտադրողներ, վորոնք «տանջ վում են և կապիտալիզմից, և կապիտալիզմի անբարար զարգացումից»:^{*)}

Պետք ե հանձնարարել Մ. Յուչյանի պես «բոլշևիկներին» կարդալ բոլշևիզմի ուսուցչակետի «Развитие капитализма в России» նշանավոր գիրքը և առանձ-

նապես ուշադրության առնել նրա «Миссия капитализма» վերջին գլուխը, վորտեղից առաջ ենք բերել հիշյալ քաղվածքը: Այդ խոսքերը մի ավելորդ անգամ ցույց են տալիս, վոր ցարական ինքնակալության որով գոյություն ունեցող հին աշխարհի հետ կապված բաղմաթիվ հիմնարկություններն ու կարգերը «խոշնդուտում եյին», կասեցնում եյին կապիտալիզմի զարգացումը վոչ թե միայն Ռուսաստանում, այլ և Կովկասում և այլ ծայրագավառներում: Վերջիններում առավելապես, քան մետրոպլում:

Խոսելով ոռւսական կապիտալիզմի ազդեցության մասին Կովկասի վրա, վորի հետեւնքով տեղական հետամնաց, միջնադարյան արհեստները քայլայվում եյին, լենինը, ի միջի այլոց, գրում ե. «այն յերկիրը, վորը հետոեփորմյան շրջանի սկզբում նոսր բնակչություն ուներ կամ լեռնականներով եր բնակված, մի կողմն եր կանգնած համաշխարհային տնտեսությունից, մինչև անգամ պատմությունից, դառնում և նավթարդյունաբերողների, գինեվաճանների, ցորենի և թութունի ֆարբերկանտների յերկիր»^{*)}.

Այս քաղվածքը բերում ե նաև Մ. Յուչյանը, սակայն նա իրեն հարց տալիս ե արդյոք թե ովքեր եյին լենինի ասած այդ «նավթարդյունաբերողները, գինեվաճանները, ցորենի և թութունի ֆարբերիկանտները»: Ռուս կապիտալիստ վաճառականները կամ ֆարբերիկանտներն արդյոք, Վ. Ն. գինեվաճաններն առավելապես վրացիներն և հայերն եյին (մասամբ և տեղացի գերմանացիք), թութունի ֆարբերիկանտները հայերը, իսկ նավթարդյունագործները գերազանցապես յեվո-

* Ibid, emp. 464.

*) Տե՛ս Ленин. Соч. т. III, 3-ое изд. стр. 46⁴

պացիք, հայերն ու թուրքերը: Բազվի նավթարդյունագործության մեջ ոռւսական կապիտալը յերկրորդական տեղ եր բռնում:

Կենտրոնական ոռւսական բուրժուազիան, հարկավ կարող եր «ձգտել ծայրագավառները զրկել տեղական արդյունագործությանը զարգացման ամեն (ամեն ?!) հնարաբորություններից ի հաշիվ կենտրոնի տնտեսական («ու քաղաքական» Գ. Ղ.) գերիշխանության հզորացման» *): Սակայն խնդիրը նրանումն եր վիճակի՝ յեր արդյոք ոռւս բուրժուազիան տնարդել կիրառել մեր յերկրում իր տնտեսական քաղաքականությունը, քանի վոր «հին աշխարհի հետ կապված բազմաթիվ հիմնարկությունները կասեցնում եյին նրա զարգացումը», նրան «խոչընդոտում եյին» ինքնակալությունը, յեվրոպական և տեղական կապիտալի մրցությունը: Մեր յերկիրը հեղեղում եյին վոչ այնքան Ռուսաստանի և Լեհաստանի ֆաբրիկատները, վորքան յեվրոպական յերկիրների առլրանքները: Առետուրը գտնվում եր զրեթե բացառապես տեղացիների ձեռքում: Բացառությամբ հազվագյուտ գեղքերի՝ մեր յերկրում գոյություն չեն ունեցել ոռւսական կապիտալիստական փիրմանների առետրական ներկայացուցչություններ, զրասենյակներ, ապա ի՞նչպես «ռուսական առետրական կապիտալը մինչև 80, 90-ական թվականները զրեթե ամրողապես իր ձեռքումներ կենտրոնացրել մեր յերկրի առետրուրը», ինչպես զրում ե Մ. Յուլյանը: **)

* Մ. Յուլյանի դրբեն 2-րդ հրատ. յերես 2

**) 2-րդ հրատ. յերես 9.

պես միջնորդներ. վոչ դա սխալ ե: Հայ առետրականներն ունեյին մեր յերկրում անկախվոչ թե միայն իրանց առետրական գրասենյակներն և պունկտերը, այլ և նրանք ունեյին իրենց ֆիլիալները Ռուսաստանի կենտրոններում-Մոսկվայում, Ողեսայում և այլուր: Մեր յերկրի գլխավոր հարստությունները — նավթը, մարդանեցը, պղինձն և այլն արդյունագործել են գլխավորապես անդլացիք, շվեդացիք, ֆրանսիացիք և այլն: Բացի պետական կապիտալը, վորը վոչ այնքան տրնտեսական, վորքան ստրատեգիական նկատառումներով գործադրվում եր գեղիք սահմանները յերկաթուղիներ անցկացնելու վրա, ոռւսական արդյունագործական կապիտալը մինչև իսկ հարկավոր չափով չեր արդյունահանում մեր յերկրի (Յերևանի նահանգի) բամբակը, վորը այնքան հարկավոր եր Մոսկվայի տեքստիլ արդյունագործության համար: Յերևանի նահանգում մի ոռւսական ֆիրմա Կարգինկին հազիվ եր կարողանում այդ ասպարիգում մրցել լեհացի Պողնանսկի կապիտալիստական ֆիրմայի հետ. ել չենք խոսում բամբակի տեղական արդյունաբերողների և առետրականների մասին:

Յեվրոպական արդյունագործական կապիտալը մեր յերկրում ահագին գեր ե խաղացեր, չիներ այդ գերը, թերեւ բանվորական շարժումը այն ծավալը չստանար, ինչպիսի ծավալ ստացավ նա մեր յերկրում առավելապես 20-րդ դարու սկզբնական շրջանում: Նույնիսկ մուսաստանի մի քանի նահանգների հանքարդյունագործական ձեռնարկությունների զարգացման պատմության մեջ յեվրոպական կապիտալը պատվագոր տեղ և զրավել անցյալում: «Շատ բնորոշ ե, զրում և հայտնի

տնատեսագետ Տուրդան—Բարբանովսկին, վոր ոռուս-հարաց վային (Դոնի ավազանի. Գ. Ղ.) յերկաթագործ զավոր ները կառուցված են առավելապես ոտար կապիտալիս-բով ^{*»}),

Այդ բանը կարելի յե նաև ասել հատկապես Անդրքովկասի մասին:

Մյուս կողմից սուսական կապիտալի կատարած
դերը մեր յերկրում չի կարելի ճշտությամբ վորոշել,
յերբ անտես ե առնվում յերկրոպական կապիտալի-
ֆունկցիան մեր յերկրում Այդ դեպքում ի՞նչ նշանա-
կություն կարող է ունենալ ձեր առաջ բերած թվերն ու
ստատիստիկական աղյուսակները՝ թվերը, ստատիստի-
կան այն ժամանակ միայն զրական նշանակություն-
ունեն, յերբ նրանք գիտական հիմունքների վրա հաս-
տատված, որյեկտիվ հետազոտության արդյունք են լի-
նում, իսկ կասկածելի և անվաստահելի աղյուրներից
առատությամբ քաղած ձեր թվերից կարելի յե միան-
գամայն սխալ և անհիմն յեղբակացություններ ստա-
նալ: Հետևապես կուլորեն ամենալայն չափերով ոգ-
տագործել նրանց, ինչպես դուք եք արել յես գտնում
եմ ապարդյուն, ընթերցողներին մոլորեցուցիչ մի աշ-
խատանք:

Ս. Յոլյանը թուլլ ե տալիս իրան գրելու, վոր յեւ
«Անդրկովկասի և մասնավորապես Բագվի Կապիտա-
լիստական զարգացումը կերպերել եմ «գերազանցապես-
հայկական կապիտալին»։ Հետևապես յես նան-
գել եմ Իշխանյանի կոնցեպցիային։ Այստեղ ել
ծոռւմ ե նա իր հոգին։ Այսպիսի բան յես յերբէք չեմ

* *Այդ բաղվածըը բերում եմ Վ. Նևսկի-ի գրքից «Օչերքի» Խ. Խ. Պ. Հ. Ա. 1924. յնքան 118.*

գրել և չեյի կարող զրել: Յես գրել եմ միայն, վոր
«մեր յերկրում ընդհանուր առմամբ ավելի մեծ դեր
խաղացել ե ոտար կապիտալը, նրա հետ և տեղական
կապիտալը, քան ոռւսական կապիտալը: Իսկ մասնա-
վորապես հայկական կապիտալի նկատմամբ ասել եմ,
վոր հայ բուրժուազիան Անդրկովկասի մյուս ազգերի
շահագործող դասակարգերի շարքում գերիշխող եր
հանդիսանում: գերիշխող միայն մեր յերկրի մյուս ազ-
գերի կապիտալիստ դասակարգերի համեմատությամբ:
Միթե սա ուղիղ չե. միթե դուք կարող եք հերքել
այդ իրողությունը: Նախկին սոցիալ-դեմոկրատ, իսկ
այժմ կոմմունիստ հայ բոլշևիկները հայ բուրժուազիա-
յի վերաբերմամբ այն կարծիքին են յեղել վոր նա իր
ապրանքների համար շուկա յեր վորոնում որինակ՝
Տաճկաստանում: Նրանց կարծիքով Տաճկա-Հայաստանի
ազատությունը («հայկական հարցը») հայ բուրժուազի-
այի ձգտություների արտահայտությունն ե յեղել այն-
տեղ — Թյուրքա-Հայաստանում — իր ապրանքների
համար շուկա ստեղծելու նպատակով:

Ահա թե ինքը Մ. Յուլյանը ինչ ե գրում այդ առաջիկ.

«Հայ բուրժուազիան՝ անկասկած խոշոր դրամատիկը՝ իզուր և աննպատակ չեցին շռայլում իրենց վոսկիները։ Դեռ վաղուց՝ յերբ արտասահմանյան կապիտալը հետզհետե կոնցենտրացիայի յեր յենթարկում Անդրկովկասի շահագործվող արդյունաբերությունը (ել մուր մնաց ոռուսական կապիտալը. Գ. Ղ.), հայ բուրժուազիան աժան հարստությունների շուկա յեր պինտում։ Նրան շատ լավ հայտնի յեր Արևելյան Ասատիքիայի՝ Երզրումի, Խոնումի, Վանի շրջաններում

ընկած նավթի, պղնձի: արծաթի, վոսկու, յերկաթի և այլ անսպառ հանքերի ռայոնները, վորոնք ավելի մեծ ապագա յեյին խոստանում, քան անդամ Բագվի շրջանը: Այդ հարստությունների շահագործումը, կամ նըրանց տիրանալը սերտորեն կապվում եր Դաշնակցության Տաճկա-Հայաստանի ազատագրական գաղափարի իրականացման հետ: «Հայ հայրենիքը» միայն հայ բուրժուազիայի համար, նկատվում ե վորպես որվա լուգունդ: Տաճկա-Հայաստանի քաղաքական ազատությունը վոչ միայն պիտի դյուրացներ առևտրական ոպերացիաները, այլ և գծում եր նրանց համար նորանոր հեռանկարներ» *):

Այս յերկար քաղվածքն առաջ բերեցի ցույց տալու համար, թե ինչպես Մ. Յոլչյանը, մոռանալով իր գրքի մեկ յերեսում գրածը, մյուս յերեսում գրում ե դրան միանգամայն հակառակ բան: Ուղիղ են արդյոք թե վոչ Մ. Յոլչյանի հայ բուրժուազիային վերագրած ձգտումները Տաճկա-Հայաստանի ազատության հարցում, դրա մասին չե այսուղ խոսքը. խոսքը միայն նրա մասին ե, վոր հերքելով հայ բուրժուազիայի կապիտուլի կտտարած նշանակալից գերը Անդրկովկասում, նա հիշյալ տողերով ինքն իրեն փառափոր ապտակ ե տալիս: Պարզ ե, վոր յեթե ճշմարիտ ե հայ բուրժուազիային նրա վերագրած տնտեսական քաղաքականությունը, ապա ուրեմն հայ բուրժուազիան պետք ե ունենար իր տնտեսական, արդյունագործական հաստատուն բազան մեր յերկում, վորպեսզի նա մի այլ յերկում — Տաճկա-Հայաստանում — շուկա փնտոեր, ողյու-

րացներ վոչ միայն իր առևտրական ոպերացիաները, այլ և գծեր նրանց առաջ նորանոր հեռանկարներ: Հայ բուրժուազիան, արդարեւ, ուներ տնտեսական այդ բազան մեր յերկում. նա իր տնտեսական-արդյունագործական ույժով մեր յերկրացի այլազգի բուրժուազակարգերի հանդեպ գերիշխող եր հանդիսանում: Այդպես չե, պատվելի «տնտեսագետ-պատմաբան»:

Խեղճ սարդ. նա ծայրը ծայրին չե կարողանում կպցնել վրապեսզի իր գրածից տրամաբանորեն հետեւ վողական տանելի մի բան դուրս գա. միայն դիմե ուժիշխն վերագրել Իշխանյանի կոնցեպցիան, վորպիսի ցավերով միայն ինքն ե բոնված:

Թե վորպիսի անվայել ձեերի, զարտուղի միջոցների յի դիմում Մ. Յոլչյանը ընթերցողին մոլորեցնելու համար, դրա մի ավելորդ ապացուցը տալիս ե նա՝ իմ մատնանշած մի այլ կարեոր հարցում:

Ես հանգամանորեն ցույց եյի տվել վոր հեղինակը միանգամայն անտես եր արել, շշատ նշանակալից այն յերեսութը, վոր Հայաստանի բանվորական շարժման գեկավարությունը նկարագրված ժամանակաշրջանում գերազանցապես դրսից եր, գտնվում եր վոչ տեղական, ներքին, այլ դրսի բանվորական ույժերի ձեռքին», այսինքն Անդրկովկասի ոտարազգի բանվորների հոսանքը զարկ տալով Հայաստանում տեղական ույժերի քաղաքական շարժման, հենց նրանք ել (ոտարազգի բանվորները) հանդիսացան գլխավորապես շարժման գեկավարները: Վոր այդ այդպես եր, յես առաջ եյի բերել վորպես ապացույց Մ. Յոլչյանի գրքից այն ոտարազգի բանվորներից մի քանիսի անունները, վորոնք քաղաքական կազմակերպության, գործադուլի

*) Տես նրա գրքի 2-րդ հրատ. յերես 63, 64:

կամ այլ քաղաքական պայքարին ակտիվ մասնակցել
են, դեկավար հանդիսացել:

Այդ առթիվ հեղինակը գրում ե.

«Յեթե այս բանի ապացույցները տալիս ե մեր
գիրքը, ապա ինչպես ե, վոր նա «Վրիպել ե հեղինակի»
աչքից և վերջը կատակերգակի դիրք ընդունելով՝ բա-
ցականում ե. «Ի՞ չի կարելի քննական խոսքը դա-
վեշտի վերածել»:

Ենս առաջարկում եմ հեղինակին ցույց տալ իր
գրում վոչ թե մեկ կամ մեկից ավելի յերես, այլ գոնե
մի քանի տող, վորոնք պարզեցին, բացատրելին այդ
«նշանակալից յերևույթը». բայց նա այդ բանը չի
կարող գտնել իր գրքում: Նա միայն տալիս ե ոտար-
ազդի բանվորների մնունները, բայց թե ինչ նշանա-
կություն ե ունեցել նրանց ներկայությունը և ակտիվ
մասնակցությունը տեղական քաղաքական շարժման հա-
մար, այդ մասին վոչ մի խոսք: Զասենք արդյոք, վոր
այստեղ ել սպեցիֆիկյան մտայնությունն ե կուրացրել
նրան: Ավելորդաբանությունների և զատարկաբանու-
թյունների փոխարեն, վորոնք քիչ չեն գրքում, ավել-
լավ չեր լինի մի քանի յերես նվիրելիք այդ կարևոր
հարցի պարզաբանության:

Դուք ձեր այդ վրիպումը չեք խոստովանում, այլ
գիտակցաբար խեղաթյուրելով ուրիշի գրածը, մոլոր-
ցնում եք ընթերցողին ձեղ արդարացնելու նախ-
տակով: Սա բանակովի վերին աստիճանի տգեղ մի ձե-
ե, վորը չի կարող ընթերցողի աշքից վրիպել:

Գանք այժմ կուսակցական պատմության վերաբեր-
յալ մի քանի հարցերին, վորոնց վերաբերմամբ Մ. Յու-
յանը մերկանում ե իր կատարյալ տղիտությամբ:

«Այն տարիներին (1903—1907 թթ.), վորոնց պատ-
մական նկարագիրն անում ե Մ. Յույյանը, գրում եյի
ես, Անդրկովկասի ս. դ. կազմակերպությունների ահա-
գին մեծամասնությունը սոցիալ-դեմոկրատական մենշե-
վիկական եյին»: Նա հերքում ե ամեքին հայտնի այդ իրո-
դությունը: «Մինչև 1905 թվի սկիզբները Անդրկովկա-
սում տիրողն յեղել ե բոլշևիզմը *), գրում ե նա: Անդր-
կովկասյան ս. դ. բոլոր կազմակերպությունների ա-
ռաջին յիրեք համագումարները անցել են «Կովկասյան
Միության» ղեկավարությամբ»:

Գրել այսպես, նշանակում ե չգիտենալ մեր կուսակ-
ցության տարրական պատմությունը: Մեր յերկրի ս. դ.
կուսակցության հետ շատ թե քիչ ծանոթ ամեն վոր
չէ, կարող չգիտենալ, վոր «Կովկասյան Միությունը»
վորպես յերկրային կենտրոնական քաղաքական մար-
մին՝ կազմակերպվել ե յերեք կուսակցական կոմիտե-
ների (Թիֆլիս, Բագու, Բաթում) միությունից 1903 թ.
վեցրությանց ամիսներին, այսինքն այն ժամանակ,
յերբ ս. դ. կուսակցության յերկու ֆրակցիաները
(բոլշևիկյան և մենշեվիկյան) դեռևս գոյություն չու-
նելին աշխարհիս յերեսին: Մինչև կուսակցության 2-րդ
համագումարը (1903 թ. հուլիս-օգոստոս, Բրյուսսել-
Լոնդոն) «Կովկասյան Միությունը», ինչպես և այդ
միությունը կազմող Թիֆլիսի, Բագվի և Բաթումի կո-
միտեները յեղել են վոչ բոլշևիկյան, վոչ մենշեվիկյան,
այլ անֆրակցիոն սոցիալ-դեմոկրատական: «Կովկասյան
Միության» 1-ին համագումարն ել, վոր տեղի ունեցավ
1903 թ. սկզբին (վետրվ.), հարկավ, անֆրակցիոն սո-
ցիալ-դեմոկրատական եր: Այդ ժամանակ «Կովկասյան

*.) Հնդկացումը Մ. Յույյանին ե. դ. Ղ.

Միության» կազմի մեջ մտնում ելին.—Դ. Տոպուրիձե, Ա. Զիրլաձե, Արշ. Զուրաբյան, Մ. Բոնորիձե, Բ. Գնունյան, Ֆ. Մախարաձե, Միսա Ցխակայա և այլն։ Կուսակցության 2-րդ համագումարից հետո նրանցից առաջինները (Տոպուրիձե—Զուրաբյան) հարեցին մենշևիկյան հոսանքին, իսկ յերկրորդները (Բոնորիձե—Ցխակայա) բոլշևիկյան հոսանքին։

«Կովկասյան Միության» 2-րդ համագումարը տեղի ունեցավ Փրակցիոնական սուր տարածայնությունների և պայքարի շրջանում։ Չնայած Փրակցիոնական սուր ընդհարումներին՝ «Կովկասյան Միությունը» պահպանում եր իր կազմակերպչական, քաղաքական միությունը, կարելի յե ասել, մինչև 1905 թվի սկզբները։ Պարզ ե, վոր «Կովկասյան Միության» 2-րդ համագումարն ել կարելի չե համարել անպայման բոլշևիկյան կամ անպայման մենշևիկյան։ Միայն պատմական խծրածանքներին սիրահար անրարիխիղճ մարդիկ կարուեն ժիանգամայն խեղաթյուրել պատմությունը այլ և այլ սուրյեկտիվ նկատառումներով *):

Դեռք և ասել, վոր Վրաստանի, ինչպես և ընդհանրապես Անդրկովկասի և գ. կուսակցության ընդհատակյա կազմակերպությունների տրադիցորն հեղափոխական գործունեյությունը շարունակվել և նույնիսկ կուսակցության 2-րդ համագումարից հետո՝ 1903—4 թվականներին, յերբ կուսակցությունն արդեն ըաշանգած եր յերկու ֆրակցիաների, այնպես վոր այդ ժամանակ հեղափոխական գործունեյության մեթոդա-

*). Այդպիսիներից եւ Ս. Տալակվաձեն, վորի «Կ հայուսուն կոմմ. նարդի և Գրանց», Տոմ. I. 1925, գիրը անարժեք և անզրագիտ մի աշխատություն եւ։

կան տարբերությունը ցայտուն կերպով չե նկատվել բոլշևիկների և մենշևիկների մեջ, բացի այս կամ այն անհատի կամ խմբակի անպատասխանատու քայլերից, վորոնք տերրորիստական-անարիխոստական բնույթ ելին կրում։ Այդ տեսակետից ուղղի և Արտ. Կարբույանի նկատողությունը, թե «1904—1905 թ. հեղափոխական վերելքի տարիներին Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան լինելով մենշևիստական, կիրառում եր հաճախ մեծամասնական գործելակերպը և գործում եր փաստորեն հեղափոխական մեթոդների համաձայն» *):

Հարկավոր եր մեկ-յերկու տարի ժամանակամիջոց, վորի ընթացքում բոլշևիզմն ու մենշևիզմը — վորպես քաղաքական-հեղափոխական տարրեր հոսանքներ — «ինքնորոշվելին», պարզվեր վերջնականապես նրանց քաղաքական փիլիոնոմիան։

Ինկատի առնելով այն իրողությունը, վոր Վրաստանի սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար ուժերի ահազին մեծամասնությունը հարեց 2-րդ համագումարից հետո մենշևիկյան ֆրակցիային և վոր նրանք տասնյակ տարիների ընթացքում վրաց բանվորական և գյուղացիական մասսաներում քաղաքական մեծ աշխատանք ելին կատարել վորի համար մեծ ազդեցություն ելին վայելում նրանց շրջաններում, հետևապես կուսակցական թե անկուսակցական այդ մասսաները, ընդհանուր առմամբ, ազդված լինելով իրանց նախկին ղեկավարներից, վորոնք 1904—1905 թ. թ. ներկայացնում ելին մենշևիկյան հոսանքը, հետամուտ ելին սրանց քայլերին, անում ելին այն, ինչ վոր վերջինների քաղական վարքագիծն եր թելագրում։ Գլխավոր հարցն

*) Այդ քաղաքածքն անում եմ ըստ Մ. Յուզյանի։

հենց նրանումն ե, վոր մասսաները հիշյալ տարբիներին գնում եյին գլխավորապես մենշևիկների յետևից, նրանց ահագին մեծամասնությունը վրացական մենշևիզմի գրոշակի տակ եր գտնվում: Մենշևիզմի վրացական հատվածն եր, վոր թե այդ ժամանակ և թե հետո հեգեմոնի դեր և խաղացել վոչ թե միայն Վրաստանում, այլ և Անդրկովկասում:

Այդ պատմական նշանակալից իրողությունը հաստատվում ե նրանով, վոր յերբ 1905 թվի սկզբին «Կովկասյան Միության» և Թիֆլիսի կոմիտեյի մեջ, վորը «Միության» ամենանշանակոր անդամն եր, առաջ յեկան սուր տարածայնություններ, վորոնց պատճառը Թիֆլիսի կոմիտեն վետրվար ամսին (1905 թ.) դուրս յեկավ «Միության» կազմից, իսկ հետո միացան Թիֆլիսին Բաթումը և Գուրիան, «Կովկասյան Միությունը» փաստորեն այլևս գոյություն չուներ: Նրա կազմի մեջ գտնվող աչքի ընկնող բոլշևիկներն այդ ժամանակ ուժուղ մասսայական հենարան չունեյին *): Թիֆլիսում բոլշևիկյան ֆրակցիան 1906 թվի սկզբում ուներ միայն 300 անդամ, մինչդեռ մենշևիկյան ֆրակցիան մոտ 4.000 **):

Բագուն, վորը նույնպես «Կովկասյան Միության» կարեռ անդամներից մեկն եր, մենակ մնաց. նա այդ ժամանակ տատանման մեջ եր գտնվում. 1905—1906

*) Խնդրում եմ նկատել, վոր յես առանց այս կամ այն ֆրակցիյին թեքվելու՝ արձանագրում եմ միայն պատմական փաստը.

**) Տես այդ ամսին Ստոկհոլմի (1906 թ.) արձանագրությունները, Թիֆլիսը Ստոկհոլմի համագումարին ուներ 3.300 կազմակերպություն

թ. թ. յերկու ֆրակցիաներն ել գըեթե հավասար ուժ եցին ներկայացնում այնտեղ *):

Դրանից հետո «Կովկասյան Միության» Յ-րդ համառ գումարը, ինարկի, կարող եր զուտ բոլշևիկյան լինել: Բայց նրա առաջին յերկորդ համագումարները, ինչպես տեսանք, չեն անցել «Կովկասյան Միության» բոլշևիկյան ղեկավարությամբ: Իրոք, շատ գիտուն պատմաբանի ատտեստացիայի տակիս իրեն Մ. Յուլյանը, յերբ նա մանավանդ պնդում ե թե 1903 թ. փետրվարին տեղի ունեցած «Կովկասյան Միության» 1-ին համագումարը անցել և բոլշևիկյան ղեկավարությամբ: մինչդեռ հայտնի յե արար աշխարհին, վոր ո. դ. Կուսակցությունը ավելի ուշ և աշխարհ բերել (1903 թ.)

*) Խնդրում են նշանակերից յերեսում ե, բագվի կազմակերպությունն այդ ժամանակ ֆրակցիաների վերաբերմաբ «հայտարար» քաղաքականություն եր հետապնդում: Ստոկհոլմի համագումարի դեկտեմբեր ընտրելու ժամանակ նա ուներ 1080 անդամ: Ընդունել են հիշյալ համագումարի համար 3 դեկտատ, վորոնցից մեկը մենշևիկ: այս վերջիններից մեկը (Լավրով) գտնվել և շարունակ տատանման մեջ, հարելով յերբեմն բոլշևիկներին, յերբեմն ել մենշևիկներին: Նկատելի յե կազմակերպության հաջողականությունը աղջեցությունը նրա վրա: Համագումարում Բագվի մանզաների հարցի առթիվ տեղի ունեցած սուր ընդհարումների ժամանակ, ահա թե դեկտատ Լավրովը ինչ ե, ի միջիայլոց, ասում: «Մեր կազմակերպությունն ունի 1080 անդամ: Յերբ կազմակերպությունը դեկտատներ եր ընտրում, ի նկատի ուներ 3 դեկտատ ուղարկել և դեկտատներ ընտրվեցին վոչ ըստ (Փրակցիոնական Գ. Դ.) պլատֆորմաների: Այդ բանում արտահայտվել և կազմակերպված բանվորների կամքը: «մեծամասնությունը կամ փոքրամասնությունը» այստեղ վոչ մերժ չունի. մեր կազմակերպությունը միաձուլլ և (ՃՈՒԱՀԱ), առանց ֆրակցիոնական բաժանման՝ ամսնքն աշխատում են միասին» (Պրոտոկոլы օբ'եկտի, օ: էջա, ստր. 142).

հուլ. ոգոստոսի 2-րդ համագումարից հետոն) իր այդ
տարերը, իրար չնմանող յերկվորյակ զավակներին:

Կարելի յե, իհարկե, փոազներ, բառեր շաղ տալ
ասելով թե «մինչև 1905 թ. սկզբները առաջին յերեք
համագումարները անցել են «Կովկասյան Միության»
դեկավարությամբ (այսինքն ուզում ե ասել «բոլեկիկ-
յան» դեկավարությամբ. իսկ մենք տեսանք, վոր դա
միանգամայն սխալ ե), բայց թե ի՞նչ եր կատարվում
է ի՞նչ պատկեր եր ներկայացնում այդ ժամանակ իրա-
կանությունը, այդ ե գլխավոր բանը, վոր չե կարո-
ղանում տեսնել Մ. Յոլչյանը:

Քանի վոր մենշևիկյան Փրակցիան տիրող եր վոչ
միայն վրաստանում, այլև Անդրկովկասում (ըստ յե-
րեւոյթին Մ. Յոլչյանն ել ընդունում ե այդ, միայն
1905 թ. սկզբից), հետևապես Անդրկովկասի զավառա-
կան կաղմակերպությունների մեծագույն մասը մենշե-
վիկյան կենտրոնի (Թիֆլիսի) դեկավարության տակն
եր գտնվում:

Եերբ պատմություն ե գրվում, պետք ե առանց
աջ ու ձախ թեքվելու դեկավարող սկզբունք ընդու-
նել-գրել պատմական իրողությունն այնպես, ինչպես
յեղել ե և վոչ թե շինծու, ֆանտաստիկական բաներ
ստեղծել. ագիտացիոն նկատառությունները տեղ չպետք ե
գտնեն այդտեղ: Այս պահանջն ե գրվում այն ամեն-
քի առաջ, վորոնք գիտեն ամեն բանից վեր դասել
բանվորական դեմոկրատիայի դասակարգային նորմալ
զարգացման շահը: Մ. Յոլչյանի տենդենցին ե ցույց
տալ բոլշեկոմի կաղմակերպչական-քաղաքական հեղե-
մոնիան մի այնպիսի ժամանակ, յերբ պատմական
որյեկտիվ հետազոտությունը ուրիշ բան ե ասում մեզ:

Յեթե բանվոր դասակարգի քաղաքական կյանքի պատ-
մության այս կամ այն շրջանում տիրող ե հանդիսա-
ցել թեկուղ հենց մոլոր, սխալ քաղաքական մի հոսանք,
պետք ե այդ ասել պարզել, մեկնել զրա պատճառները,
բանվոր դասակարգի գիտակցության սեփականություն
դարձնել կյանքի ուեալ փաստերով ու գեղքերով, վոր-
պեսզի անցյալի փորձն ինկատի առնելով նա զգուշանա
սխալ քայլերից ապագայում:

Կեկավարվելով միայն այս սկզբունքով՝ մենք զրել
եյինք, վոր այս կամ այն գավառական քաղաքի կաղ-
մակերպությունը սոցիալ-դեմոկրատական եր «հաշտա-
րար» տրամադրություններով (Յերևան), սոցիալ-դեմոկ-
րատական եր թերեւ «բոյկոտիատական» տրամադրու-
թյամբ (Ալեքսանդրապոլ) և այլն: Այսքանը կարող եմ
հաստատապես պնդել վոր թե Յերևանի, Ալեքսանդրա-
պոլի և թե նույնիսկ Բորչչալի կաղմակերպությունը,
վորի առիթով Մ. Յոլչյանը ապարդյուն քրտնաթոր
ճիգ ե թափում ապացուցելու, վոր «բոլշեկովյան» եր,
գտնվում եյին կենտրոնի (Թիֆլիսի) մենշևիկյան դե-
կավարության տակ: Ուրիշ բան ե, յեթե այս կամ այն
տեղում տարվել ե ավելի բոլշեկովյան (ինչպես Բորչչա-
պում) քան մենշևիկյան աշխատանք:

Ծատ գժվար ե, թերեւ անհնարին, յետամնաց վայ-
րերի կաղմակերպությունների կամ խմբակների մասին
ասել թե նրանցից վնարի մեջ այս ինչ ֆրակցիան մյուս
ֆրակցիայից գերակշիռ ուժ եր ներկայացնում, վորով-
րետե այն ժամանակ յետ ընկած զավառների մեր փոք-
րաքանակ մասսաների համար բոլշեկոմի ու մենշևիկոմի
«սուրբ յերբորդության» պես անըմբունելի մի բան եր:
Ի՞նչ եյին ներկայացնում իրենցից որինակ Դարսը,

Նոր-Բայաղետը, Դուրդուղուիխն կամ այլ այսպիսի տեղերը-մենչեփէլյան թե բոլցեփէլյան, թողնում ենք պարզելու այնպիսի Շնշանավոր պատմաբանին», ինչպիսին ե Մ. Յոլջյանը:

Ալեքսանդրապոլի կազմակերպության վերաբերմամբ կարելի յի հաստատ ասել, վոր քանի վոր նա գոտնվում եր Թիֆլիսի մենշևիկյան ղեկավարության տակ և բացի դրանից այնտեղ քաղաքական ղեկավարող դեր խաղում եր վոչ թե քաղաքը, այլ յերկաթուղու կայարանը իր արհեստանոցներով, վորտեղ աշխատում եյին գերազանցապես մենշևիկյան հոսանքին հարած վրացի քանվորները, հետևապես այնտեղ մենշևիկյան-սոցիալ-դեմոկրատական հոսանքն եր գերիշնում այն ժամանակի:

Անհրաժեշտ ե մատնանշել, վոր 1905—1906 թվականներին, մինչդեռ կուսակցության ինտելիգենտական վերին շերտերում ֆրակցիոնական պառակտիչ պայքար եր տեղի ունենում, կուսակցական բանվորական մասսաներում, պրոլետարիատի շարքերում ամենուրեք՝ կենտրոններում թե պերիֆերիաներում դասակարգային համերաշխության, միության, «երթորայի» լողունգն եր շեշտակի հնչվում: Նրանք պահանջում եյին ֆրակցիաների փոխադարձ ինքնավոչնչացման պայքարի դադարումը, բողոքում եյին պառակտման փորձերի դեմ:

1905 թվի վերջերը և 1906 թ. սկիզբները «զինադադար» հայտարարելով՝ ֆրակցիաները միասնական ֆրոնտ ստեղծեցին համերաշխ ուժերով պայքար մղելու գլուխ բարձրացնող քաղաքական ուեկցիայի վայրագությունների դեմ: Զնայած մի քանի անհատ ինտելիգենտ սոցիալ-դեմոկրատների բոնած ծայրահեղ «անհաշտ»

գիրքավորյան, Անդրկովկասի ս. դ. կազմակերպություններից շատերին տիրել եր այդ ժամանակ «հաշտարար» տրամադրություն: Հենց այդ «հաշտվողականության», միացյալ ուժերով գործելու անհրաժեշտության նշանաբանի տակ հրավիրվեց 1906 թ. (ապրիլ) Ստոկհոլմի կուսակցության 3-րդ (4-րդ ըստ բոլցեփիկների) միացութիւն համագումարը: Ուրիշ խոդիր ե, յեթե Ստոկհոլմյան և նրա հաջորդ Լոնդոնյան համագումարները միանդամայն հակառակ արդյունքներ ունեցան:

Յերեանի կազմակերպության հարցի մասին, վորն առանձնապես զբաղեցնում ե Մ. Յոլջյանին, անհրաժեշտ ե տալ դարձյալ մի քանի տեղեկություններ ի լրումն այն բոլորի, ինչ վոր արդեն գրել եմ իմ քննադատական հոգվածում «Խ. Հօռում: Այդ անհրաժեշտությունն իս առավել զգալի յի դառնում, քանի վոր Յերեանի որինակի միջոցով կարելի յի լույս սփոռել այդ ժամանակի մեր գավառական մյուս կազմակերպությունների վրա, նրանց քաղաքական հասունության աստիճանի, քաղաքական դրության վրա ընդհանրապես:

Մ. Յոլջյանը համառարար պնդում ե, վոր Յերեանի կազմակերպությունն այդ ժամանակ (1906—1907 թ. թ.) բոլցեփիկյաները: Առաջ. Մոավյանն ել ասում ենույնը՝ «Ստոկհոլմի համագումարին, գրում ենա, մասնակցեց նաև Յերեանի ս. դ. մատաղ կազմակերպությունը, վորն մեծամասնությամբ բոլցեփիկյան եր» *): Սա միանգամայն սխալ ե, վորի մասին խոսք կլինի փոքր ինչ հետո:

*) Տես. «Ծնկ. Ա. Մոավյանի հետազությունների ժողովածու», Պետրատ, Յերեան, 1930, յերես 33.

Սակայն Մ. Յոլջյանը բերում ե այսպիսի «ջախջախիչ» մի փաստ: «Յերևանից յերկու անգամ—1906 թ. և 1907 թ. Ստոկհոլմի և Լոնդոնի կուսակցական համագումարներին գնացել են բոլշևիկ գելեգատներ. առաջին գեղքում Ստ. Շահումյանը, յերկրորդ գեղքում Սակալովսկին. հետեւապես, յեզրակացնում ե նա, Յերևանի կազմակերպությունն այդ ժամանակ «բոլշևիյան» էր:

Բոլշևիկ գելեգատների «ընտրությունը» յերկու գեղքումն ել կատարվել ե իմ որով, իմ գիտարյամբ և իմ ցանկությամբ:

Առա թե ինչպես և ինչ պայմաններում:

Յերևանի կաղմակերպությունը, վորը 1906—1907 թվերին չուներ նույնիսկ 300 անդամ, մի թիվ, վոր պահանջվում եր ամեն մի գելագատ ուղարկելու համար համագումարին, մի խայտարդետ կազմակերպություն եր: Նրանում կային դպրոցական աշակերտներ, արհեստանոցների քյարզահներ և աշակերտներ, Նորբայազեցի բաղնիքի ծառայողներ (գլխավորապես քիսաշխներ), դարախանի (ասիական կաշվի գործարան Զանգվիլ ափին), Սարաջնի զավողի մի քանի բանվորներ (գլխավորապես տաճկահայեր), «Զինդելի» ծառայողներից 2—3 հոգի: Բացի սրանից, կային և նախկին հնչակյաններից նորաթուլս մի քանի սոցիալ-դեմոկրատներ, ինչպես Շուշանյան Արամ և նրա ընկերները, վորոնց ձեռքին եր գտնվում կազմակերպության գեկավարությունը. Նրանք եյին կազմում Յերևանի կոմիտեն: Նրանք ամենքն ել հարած եյին բոլշևիկյան հոսանքին: Թերեւս այդ ե պատճառը, վոր պատանի դպրոցական աշակերտ Մոավյանին թվացել

ե այն ժամանակ «բոլշևիկյան» Յերևանի կազմակերպությունը:

Նույն ընկ. Մոավյանը ցույց ե տալիս 1906 թվին (Ստոկհոլմի համագումարին դեկտեմբերու առթիվ. Գ. Դ.) Յերևանի ս. դ. կազմակերպության անդամների թիվը մոտ հարյուրա. *) բայց դա ճիշտ չե. կազմակերպությունն ուներ հարյուրից ավելի անդամ. համենայն դեպք նրա անդամների թիվը չե հասել ամենին 300-ի: Մ. Յոլջյանը 1906 թվի համար ցույց ե տալիս մոտ 300 անդամ:

Ահա նրա գրքում բերած ցուցակը.

		մոտ	15	անդամ.
Յեղիազարյանի բաղնիսի ծառայադներից		25		
Տնային ծառայողներից		15		
Քյարզահներից		40		
Աշակերտական խմբակներից		80		
Թուրքական գրչանից		5		
Զինագործներից		20		
Սարաջնի գործ. բանվորներից		—		
Այդի փորող բանվորներից և այլն		—		
Ընդամենը		300		

Քանի վոր այստեղ Սարաջնի գործարանի և այդի փորող բանվորների թիվը չե ցույց տրված, աշխատավորության մյուս կատեգորիաներին պատկանող կազմակերպության անդամների թիվը անում ե միայն 200: Սարաջնի գործարանի անդամների թիվը եր (1907 թ.) մոտ 15. յեթե ավելացնենք նաև ինտելիգենսիա սոցիալ-դեմոկրատների (նախկին հնչակյաններ) և «Զինդելի» ծառայողների թիվը միասին մոտ 20 հո-

*) Ibid, յեթե 27.

գի, ապա մենք կստանանք մոտ 235 անդամ. համենայն դեպս անդամների մարքսիմալ թիմն այդ ժամանակ պետք և համարել վոչ ավելի քան 250:

Այդի փորող բանգորների թիվը կարելի յե հաշվել հարյուրից ավելի. ներանցից և վո՛չ մեկին կարելի չե ամենակին կուսակցության անդամ համարել. նրանք գավառներից յեկած անկազմակերպ և յետամնաց սեղոնային (գյուղացի) բանվորներ եյին, վորոնց ինձ հաջողվեց մի քանի անգամ հավաքել գլխավորապես «Ղարիբանոց»-ում (հին գերեզմանատում Յերևանում) նրանց տնտեսական պահանջները ձևակերպել-մշակելու համար: Դա այգետներերի գեմ տնտեսական հողի վրա պայքար մղելու ազիտացիոն նշանակություն ուներ միայն, վորը ժամանակին, հարկավ, (ինչպես ամեն տեղ նման դեպքերում) կիրխվեր վորոշ փորձառությունից և համունությունից հետո՝ քաղաքական պայքարի: Համենայն դեպս նրանց 1907 թ. կազմակերպության վորպես բաղկացուցիչ մաս համարել կարելի չե ամենակին:

Այսպիս, ուրեմն, 1906—1907 թ. թ. Յերևանի կազմակերպությունը խայտարղետ մի խմբակցություն եր. նրա անդամների մեծ մասը, ինչպես արդեն գրել եմ, «քաղաքականապես դեռևս անզրագետ և անզիտակից եյին, վոչ սոցիալ-դեմոկրատ, այլ ավելի շուտ համակրողներ»:

Ազգայնական հայ «հեղափոխական» կուսակցություններն այնպիսի խոր հետքեր եյին թողել, այնպիսի թանձր զբոշմ եյին գրել Յերևանի և այլ գավառների աշխատավորական, գենոկրատական խավերի վրա, վոր ազատագրել նրանց կարճ ժամանակամիջու-

ցում ազգայնական ավանտյուրիստական կոշտարից, անհնարին եր:

Սոցիալդեմոկրատ հայ ընկերների, ինչպես և Ստեհանմյանի ցանկությունն ե յեղեն, վոր Յերևանը և թե մյուս վայրերը, վորոնց կազմակերպությունները չեյին ներկայացնում համագումարներին դեկեպատ ուղարկելու համար անդամների պահանջվելիք որինական թիվը (300 կամ ավելի), հնարավորություն ունենան իրենց ներկայացուցիչներին համագումար ուղարկել: Մասնակից դարձնելով կուսակցական կյանքին՝ մեր նպատակն եր նրանց սոցիալիստական-բանվորական շարժման մեջ առնելը: Այդ միջոցը քաղաքական-դաստիարակչական նշանակություն ուներ, վորի կիրառումը համարում եյինք այն ժամանակ անհրաժեշտ:

1906 թվի մարտի վերջերը Յերևանցիք Ստոկհոլմի համագումարի համար ի նկատի ունեյին տողերիս գրողին և Ստեհանմյանին: Յես հրաժարվեցի գնալ այն պատճառով, վոր կուսակցական պարտադիր աշխատանքներով սաստիկ ծանրաբեռնված եյի և «Կայձաթերթը, վորի պատասխանատու խմբագիրներ շրջանային կոմիտեյից նշանակված եյինք յես ու Ստեփանը, ապրիլի մեկից պետք ե լույս տեսներ և ինձ անհնարին եր այդ բոլոր գործերը յերեսի վրա թողնել:

Չնայելով, վոր իմ և Ստեփանի մեջ գոյություն ունեյին տակտիկական ընույթ ունեցող մի քանի տարածայնություններ, այնուամենայնիվ մեր մեջ խորություն ամենամեծ չե յեղել: Ել չեմ խոսում այն մասին, վոր այդ ժամանակ 2 ֆրակցիաները ձուլվել եյին և աշխատում եյին ու դու մի կազմակերպության

մեջ: Յես շատ ավելի մոտ եմ յեղել այն ժամանակ Ստեփանին քան ժորդանյաներին կամ Զիլբաձեներին:

Թիֆլիս Եյին յեկել այդ ժամանակ Յերևանի կոմիտեյի 2—3 անդամները. մեր մեջ համաձայնություն կայացնելով, առաջարկվեց Ստեփանին գնալ Ստոկ հոլմ. նա ուրախությամբ ընդունեց այդ առաջարկը՝ Շուտով Յերևանի կոմիտեյից կնիքով վավերացրած մանդատ ստացվեց, վորից հետո Ստեփանը անմիջապես ուղերձվեց Ստոկհոլմ: Յերևանում վոչ ընտրություն և յեղել և վոչ ել թե կազմակերպության համքն են հարցըրել այլ կոմիտեն եր այդ բանը ինքնապլուխ կատարել:

Ահա այս և իսկական յեղելությունը:

Վոր Ստոկհոլմի համագումարում Թիֆլիսի ղեկավար մենշևկել դեկատաները կարող Եյին հիմք ունենալ վեճ հարուցելու Յերևանի դեկատի վերաբերմամբ, այդ բանում կասկած չեր կարող լինել:*) Հանգուցյալ Մաավյանին վոչ վոք չի կարող մեղադրել թե «մենշևկել» և յեղել, սակայն նա ևս նույն ցուցմունքն ետալիս, ինչ վոր համագումարում կոլկասցի մենշևկելիները: Նա գրում ե. «Յերևանի ս. դ. կազմակերպությունը մատադ, անփորձ ինտելիգենտական մի կազմակերպություն եր (հնչակյան ծագում ունեցող մի

*) Մենշևկել դեկատաներն ասում եյին, վոր «Յերևանի կազմակերպությունը հազիվ 2 ամիս և միայն ինչ զոյություն ունի և իր գործունելությունը վոչ մի բանով չե արտահայտել, բացի այդ նաև «Հնչակ» նացիոնալիստական կուսակցությունից անջատված մի մասն և իրենից ներկայացնում և իր սոցիալ-դեմոկրատական լինելը (социалдемократичность) դեռ ևս չե ցույց տվել»: (Տես. Պրոտոկոլ Ծոկը, «Եզդա», էջ 152:)

քանի ինտելիգենտներ 1905 թվի աշնանը և ձմեռը ղեկավար դեր Եյին կատարում:*) Իսկ լոնդոնի համագումարում Ստեփանի նկատողությունը մեզ վրա շատ անախործ տպավորություն և թողնում: Թիֆլիսի կենտրոնը 1907 թվին «վոչ մի հատուկ ագենտ չե ուղարկել Յերևան ընտրությունները խանդարելու համար»: Համագումարի նիստերին ֆրակցիոնական կրքից դրդված ի՞նչ խոսքեր ասես չեյին շպրտում միմիանց յերեսին իրար դեմ կանգնած անհաշտ պայքարի տեսնչով բռնված ֆրակցիաների ներկայացուցիչները: Այդ բանի ապացույցներն ընթերցողը կարող ե գտնել մեր կուսակցության համագումարների, առավելապես Ստոկհոլմի և Լոնդոնի համագումարների արձանագրությունների մեջ:

Մ. Յոլյանը սևահոգի զրաբարտիչի անունն եռ ուղղում վաստակել ասելով, թե «Ժորդանիայի այդ հատուկ ագենտն յեղել և թերևս ինքը Ղարաջյանը» (վորպես թե «բոլշևիկ դեկատի ընտրությունը խանդարելու Լոնդոնի համագումարի համար»). Գ. Դ.):

Ժորդանիայի հետ ծանոթությունից (1898 թ.) հետո, յերբեք լավ հարաբերությունների մեջ չեմ գտնվել նրա հետ:

«Հատուկ ագենտ» լինելու ընդունակ են կամազուրկ և ինքնուրույնությունից զուրկ վարձկան մարդեկ: Իմ ինքնուրույնությունը, իմ գաղափարական անկախությունը վոչ մի առիթով և վոչ մի գնով վոչ վոքի և վոչ մի բանի հետ չեմ փոխել: Նույնիսկ Գ. Վ. Պլեխանովի հետ, վորին տասնյակ տարիների ընթաց-

*) Տես նույն «Ա. Մաավյանի հիշողությունների ժողովածու», յերես 30:

քում ուսանողությանս ժամանակից մինչև վերջը շատ մոտ, մտերմական հարաբերությունների մեջ եմ յեղել վերջին ժամանակ համաշխարհային պատերազմի շրջանում պատերազմի հարցերի առթիվ անհամաձայնություն ունեցա, ո՞ւր մնաց ժորդանիային և նրա նմաններին, վրոնց քաղաքական գործունեյությունը յես միշտ համարել եմ ոպպորտյունիստական և վոչ ինտերնացիոնալիստական: Այսպես վոր Մ. Թոլչյանը կարող ե «հատուկ ազենտներ» վորոնել վոչ իմ գործունեյության, այլ այն տրպիք անհատների գործունեյության միջավայրում, վրոնք շարունակ վաճառում են իրենց գրիչը, իրենց խիզն ու համոզմունքը:

Տեսնենք այժմ թե «բոլցերի» Սակալովսկին ինչպես և Յերեանից դեկտատ ընտրվել 1907 թվին Լոնդոնի համագումարի համար:

Թիֆլիսում մոտ մի տարի բանտ նստելուց հետո՝ 1907 թ. սկզբին հիմնդության պատճառով նոր եյին ինձ ազատել բանտից դրամական գրավականով: Գնացի Յերեան ընտանիքիս տեսության:

Այս անդամն ել չնայած այն բանին, վոր Յերեանի կազմակերպությունը չուներ անդամների պահանջած որինական թիվը, հարկավոր եր Յերեանից դեկտատ ուղարկել լուսոնի համագումար: Միակ թեկնառուն Յերեանից կարող եր լինել միայն տողերս գրողը: Թե հիմնդությանս և թե այն հանդամանքի պատճառով, վոր մի շարք ընկերների հետ իմ գործը պետք ե քննիքը դատաստանական պալատում^{*)}) և յես վրատիւ-

^{*)} Այս անգամ ինձ մեղադրում եյին ո. դ. «Հանցափոր բնկերության» («պրետուրուս սոօնքետեա») պատկանալու և Հաղպարարի հայտնի անլեզալ տպարանի հետ կապ ունենալու մեջ:

կանության հսկողության տակ եյի գտնվում, ինձ անհարին եր տեղից շարժվել, Կովկասի սահմաններից հեռանալ: Մնում եր միայն մի յելք-առաջարկել Գ. Սակալովսկուն գնալ լոնդոն: Նա այդ ընդունեց վորոշ տատանումով: Կուսակցության անդամներից մի փոքրիկ ժողով հրավիրեցի (առա 20—25 հոգի), վորոնց մեծ մասը խեղճ ու կրակ մարդիկ եյին: Վորոշում կայացավ տալ մանդատ Սակալովսկուն այն պայմանով, վոր նա համագումարում ֆրակցիաների նկատմամբ «հաշտարար» գիրք ընդունի: Նա համաձայնեց այդ բանին: Սակայն կազմակերպության կասսան աղքատ եր. հարկավոր եր ճանապարհածախսի համար մի հատուկ գումար: Բացի այն, վոր կազմակերպության ոգտին ինձ հաջողվել եր այդ ժամանակները կազմակերպել թատերական մի ներկայացում, վորին մասնակցեց, իմիջի այլոց, շնորհալի գերասան Շախնաթունին, կարիքը ստիպեց ներկայանալ ինձ Շուտովի կավոզի կառավարիչ իմ հին ծանոթ Մկրտիչ Մուսինյանին և նրա միջոցով առաջարկել զավոդչիկ Շուտովին տալ կազմակերպությանը փոխարինաբար 100—150ռ.: Շուտովը, վորն այլ գեպքերումն ել աջակցել եր կազմակերպությանը նյութապես, այս անգամ ել չմերժեց, տվեց ուրախությամբ 100 ռ.: Ահա այդ գումարով «բոլցերի» Սակալովսկին Յերեանի կազմակերպության կողմից գնաց «հաշտարար միստիայով» լոնդոնի համագումար: Վերադրձին Ստ. Շահումյանը, Միխա Ցիսակյան և ուրիշները կշտամբում եյին և հայնոյում Սակալովսկուն «Ճանձ» անդամներով նրան, վորովհետև համագումարում նա հետամուտ եր յեղել հաշտարար» քաղաքականության, բայց նա այդ բանում մեղավոր չեր.

Յերեանից նա ստացել եր այդպիսի հրահանդ, վորին
և հավատարիմ եր մնացել:

Անա թե ինչպիսի «բոլշևիկյան» կազմակերպություն և յեղել այդ ժամանակ Յերեանում և ինչպիսի «բոլշևիկ» դեկտատ և ուղարկվել լոնդոնի համագումար: Ամենավճռական կերպով հայտնում եմ, վոր վոչ մի «հատուկ ագենտ» չի յեղել այդտեղ «բոլշևիկի» ընտրույունը խանգարելու համար: Իմ առաջարկով և աջակցությամբ ե ընտրվել և ուղարկվել լոնդոնի համագումար դեկտատ՝ «բոլշևիկ» Գ. Ն. Սակալովսկին: Մ. Յուլյանը, վորը Յերեանի կազմակերպության վերաբերյալ գրեթե իր բոլոր տեղեկությունները բացառապես քաղել և Սակալովսկուց, կարող ե դարձյալ դիմել նրան ստուգելու՝ ճիշտ և արդյոք այն բոլորը, ինչ վոր յես գրեցի այստեղ Յերեանի մասին:

Այսպես, ուրեմն, Յերեանի կազմակերպությունը բոլշևիկյան չեր, այլ անորոշ, թեև նրա կոմիտեյի անդամները «հնչակյան ծագում ունեցող մի քանի ինտելիգենտներ» եյին (վկայություն Ա. Մուավյանի), վորոնք հարած եյին «բոլշևիկյան» հոսանքին: Յերեանի կազմակերպությունը գտնվում եր թիֆլիսի մենշևիկյան կենտրոնի զեկավարության տակ, ինչպես արդեն դրել եմ: Նա հաստատված եր թիֆլիսից 1905 թվին և ուներ կենտրոնից պատվիրած իր կնիքը:

Թիֆլիսի Առևտրական բանկի Յերեանի բաժանմունքի ծառայողների 1906 թ. ոգոստոս-սեպտեմբերյան գործադուլը տեղի յե ունենում վոչ «բոլշևիկյան կազմակերպության», այլ թիֆլիսի մենշևիկյան կոմիտեյի զեկավարությամբ: Դա յել շատ ապացույցներից մեկն

և, թե Յերեանը ինչպիսի «բոլշևիկյան» կազմակերպություն և ունեցել այն ժամանակ: Այդ ապացույցը տալիս է հենց Մ. Յոլչյանի գիրքը:

Զարաչար սիալիում և Մ. Յոլչյանը, յերբ նա ասում ե, վոր «կուսակցության 3-րդ, 4-րդ և 5-րդ համագումարների շրջանում չեր կարելի գտնել վոչ միայն ամբողջ կազմակերպություն, այլ և անհատ սոցիալիստակատ, վոր չիմանար յերկու ֆրակցիաների տարածայնության խմատը»: Վոչ թե միայն հետամնաց Յերեանի և այլ գավառների դեռևս որինավոր չկազմակերպված մասսաները չգտնելին, չեյին ըմբռնում ֆրակցիաների տարածայնությունների եյությունը, այլ և նույնիսկ արդյունագործական կենտրոնների կազմակերպությունների «գիտակից» ճանաչված անդամներից շատերը պարզ ու վորոշ չեյին կարողանում համականալ այն ժամանակ թե ինչումն են կայանում ֆրակցիաներին բաժանող հիմնական տարածայնությունները: Կարգացեք Աս. Կախոյանի վերջերս հրատարակված ամօրտի գիրքը*) և տեսեք թի նա դեռ այսոր-ֆրակցիաների գորությունից 27—28 տարի անց—ինչպես և հասկանում և հասկացել նրանց տարածայնությունների «իմաստը» և ինչպիսի բացատրություններ և տալիս նրանց մասին: Մինչդեռ Կախոյանը ցագ իսկը տալիս

*) Ասում ենք ամոթալի, վորովհետեւ նա ամբողջապես վարկարեկիչ և այն կուսակցության և ֆրակցիային, վորին նա անդամ և յեղել: Դա ինքն այդ բանը, իհարկե, չի հասկանում. ընդհակառակը շատ բաներ հրատակում ե մեծ ինքնաբավականությամբ և պարծենկուո՞թյամբ... Միայն զարմանալ պետք ե թե ի՞նչպես կարող եր մոր որերում մի այդպիսի խայտառակ գիրք լույս տեսնել:

«գիտակից հայ բոլցերիկ բանվոր և ճանաչաված յեղել», վորը նույնիսկ լոնդոնի ճամսովումարին (1907թ.) մասնակցել և վճռական ձայնով վորպես գելեզատ Բորչարդից, իսկ Մ. Յոլյանն ել իր հերթին հարկ և համարել զարդարել իր գիրքը բաղմազան պատկերների հետ նաև նրա պատկերով, թերևս իր «կուսակցական» սրբազն պարտքը կատարած լինելու ցանկությամբ։

Մինչև անգամ ինտելիգենտական վերին շերտերում միայն այդ տարածայնությունները վորոշակի կերպարանք են ընդունում տարիների ընթացքում և վոչ թե միանգամից։

Ահա այս և յեղել իրականությունը, պատմական իրողությունը, վորին միանգամայն անծանոթ և Մ. Յոլյանը։

Բորչարդի ս. դ. կազմակերպության վերաբերյալ Մ. Յոլյանի տողերը առաջին բառից մինչև վերջինը պարունակում են ամօրախի գրագրություն։ Յեթե յետ «Խ.Հ.Թերթում զետեղված քննադատական հոդվածում լուսթյամբ եմ անցել Բորչարդի կազմակերպությունը, դրա պատճառն այն և յեղել վոր յետ այն ժամանակ հիմնավորապես ծանոթ չեմ յեղել հայ ս. դ. ընկերների այնտեղ վարած գործունեյության հետ։ Թեև յետ 1905 թ. առաջին հեղափոխության շրջանում Թիֆլիսի և շրջանային կոմիտեների անդամ եմ յեղել բայց յերբեք առիթ չե յեղել ինձ լսելու վորեւ խոսք Բորչարդի մասին։ Դուցե իմ բացակայության կամ 1906 թ. բանտում նստած ժամանակ հարց և հարուցված յեղել նրա մասին, յետ այդ չգիտեմ։ Ինձ բայց վիճ հայտնի չե թե ինչ «խայտառակ պայքար եր, վոր յերկար ժամանակ վարում եր թիֆլիսի մասին»։

Յեղել կոմիտեն իրեն Գ. Ղարաջյանի, Ա. Ցերոնյանի և այլոց անմիջական (ընդգծումը Մ. Յոլյանին ե. Գ. Դ.) մասնակցությամբ կոռու կազմակերպությունը «գրկելու» Ս.Շահումյանի, Սպանդարյանի, Դյալուշկայի և Կախոյանի «մասակար» ազգեցությունից։* Մ. Յոլյանը հաշիվ տալիս ե արդյոք իրեն թե ինչպիսի զենքով և կրվում հակառակորդի հետ։ Յետ գտնում եմ անհրաժեշտ, վոր ընկ. Ար. Յերզնկյանը վորպես լուեցի, թերևս ավելի իրազեկ՝ կոռվա անցուղարձին, հրապարակով պարզ եր այն «խայտառակ պայքարը, վորին ինքն ել Գ. Ղարաջյանի և այլոց հետ անմիջական մասնակցություն ե ունեցել», թե ով և յեղել «կուսակցության վորոշման հիման վրա գնդականարպած հաղթատեցի Հրտես, պրովոկատոր» և այլն Գրիգոր Յերզնկյանի յեղայր նույնպիսի ցած հոգու տեր «մարդասպան» Քոթոլին յերես տվող նրա արգականներից մեկը վորը մենշևկիների շարքում աչքի ընկնող դեր եր կատարում»**։

Վոչ, շատ ազնիվ բարեկամ, Շահումյանի, Դյալուշկայի և այլ այդպիսի ընկերների գործունեյությունը Բորչարդում կամ ուրիշ տեղում յետ մնասակար չեմ համարել։ Այն ժամանակ, յերբ թերևս դուք գեռես աշխարհ չեյիք յեկած, Դյալուշկան, վորին առանց վորեւ ինքնագովության արձանագրում եմ միայն փաստը, հնչակյան աղջամուղջից աղատագրել եմ և նա դրանից հետո 1898 թվից սկսել ե թիֆլիսում իմ կազմակերպած բանվորական խմբերին և ժո-

* Տես 2-րդ հրատ. առաջաբան, յերես XIV

** Տես Աս. Կախոյանի «կոռվա հեղափոխական անցյալից» հողվածը, «Նորք», գիրք №2, 1923, յերես 272, 273

ղովաներին մասնակցել մի քանի տարի շարունակ, պահպանել և մինչև իր մահը (1918թ.)՝ ամենամտերիմ հարաբերություններ տողերիս գրողին հետ. Նույնը կարելի յե ասել և հանգուցյալ Ստ. Շահումյանի մասսին: Ել ի՞նչպես կարող եյի նրանց «վնասակար» ազդեցության դեմ պայքարել մասավանդ հայությակարանության այն ժամանակվա պայմաններում, յերբ բոլշևիկների մենշևիզմի մասին հայ մասսաները վոչ մի հասկացողություն չունեյին և հարկավոր եր նրանց մեջ պատվաստել մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական—հեղափոխական գաղափարներ, պայքար մղել ցարական բռնակալության ռեժիմի և հայ նացիոնալիստական զաւուի հեղափոխական կազմակերպությունների դեմ, վորոնք նրանցից դարձրել եյին քաղաքանապես իներտ, ապօլիտիկ խղճալի մի զանգված:

Վոր Մ. Յուչյանը չի կարող առանց զրպարտությունների ապրել, ինչպիս ձուկը առանց ջրի, յեւ կրերեմ դարձյալ մի փաստ:

«Закнига»-ի հրատարակությամբ վերջերս լույս
տեսավ ոռուսերեն Մ. Յուզյանի «Августовская стачка
рабочих г. мастерских и депо зак. жел. дор.»
վերնագրով գրքութիւն: 1900 թ. ողոստոսյան հայունի
գործադուլի նկարագրին ե. բատալիս այդ գրքութիւնը:
1898 թից մինչև 1902 թ. փետրվ. 15-ը, յերբ տեղի
ունեցավ Թիֆլիսի ս. գ. կոմիտեյի տապալումը*, տո-
ղերիս գրողն յեղել և Թիֆլիսի կոմիտեյի անփոփոխ
անդամ: Այդ շրջանում Թիֆլիսի կոմիտեն մինչև

*Թիկիլսիկ կոմիսիոնի ձերբակալման հետ միաժամանակ կա-
լանավորման յենթարկեցիցին ու դ. կազմակերպությունից նաև մի-
քանի տասնամյակ հոգի:

«Կովկասյան Միության» կոմիտեի հիմնումը 1903 թ.
սկզբին, Անդրկովկասի քաղաքական ղեկավար կենտ-
րոնի դեր և խալացել 1900 թվի յերկաթուղու Թիֆ-
լիսի գլխավոր արհեստանոցների և գեպոյի հիշյալ
նշանավոր գործադուլը Թիֆլիսի կոմիտեյի ղեկավա-
րությամբ տեղի ունեցավ օգոստոս ամսին։ Հիշյալ թվի
հուլիս-օգոստոս ամիսներին յես հիվանդության պատ-
ճառով բացակա եյի Թիֆլիսից, բժշկում եյի Աբաս-
թումանում։ Վերադարձա Թիֆլիս սեպտեմբերին, յերբ
գործադուլն արդեն վերջացել եր՝ բանվորների խիստ
պարաւությամբ։ Կառավարությունը դեռ ելի շարունա-
կում եր իր անողոք ռեպրեսիաները։ Այսպես ուրեմն
տողերիս գրողը վորապես կոմիտեյի անդամ՝ անհատ-
պես վոչ մի մասնակցություն չե ունեցել այդ գործա-
դույթ կազմակերպման և ղեկավարության։

Բայց ահա թե ինչ ենք կարդում Մ. Յոլջանի հիշալ գրքույկի 46 յերեսում.

«Բնորոշ ե նկատեք վոր գործադուլի զարգացման պրոցեսում վերջինիս (գործադուլի Գ. Դ.) յերիտասարդ աղիտատոր-կազմակերպիչների և կոմիտեի մի մասի միջն տեղի ունեցավ՝ առաջին ընդհարումը. —ինտելիցիաներ-կոմիտետչիկները (Ս. Զիրլաձե, Ս. Զուղկի, Գ. Ղարաջյան և ուրիշներ) համամիտ չեյին յերիտասարդ պրոպագանդիստների «հափշտակման» (ուղարկած ցուլեցենու), վորոնք իրենց պահանջները հիմնում եյին գործադուլավորների տրամադրության վրա», իսկ ծանոթության մեջ հեղինակը հարկ ե համարել ծանուցանելու, վոր «այդ տարածայնությունների հետևանքով մի քանի յերիտասարդ աղիտատորներ թողեցին թիֆլիսը և անցան Բաթում և այլ ուս-

յոնները (Լադո Կեցիսովելի, Զուղաշվելի-Մտալին և այլն):

Մարդ միանգամայն ապշում և կարգալով այդպիսի շինծու, հնարովի պատմություններ: Ի՞նչպես և պատահել, վոր իմ Թիֆլիսից բացակայելու ժամանակ յես մյուս «ինտելիգենտ-կոմիտետչիկների» հետ մասնակցություն եմ ունեցել գործադուլի կազմակերպման և ղեկավարության և վոր տեղի յե ունեցել ուրիշների հետ նաև «իմ և յերիտասարդ-կազմակերպիչների միջև առաջին ընդհարումը». թող ինքը Մ. Յոլչյանը հրապարակով պարզե այդ հանելուկը:

Անցնենք առաջ:

Լադո Կեցիսովելին դեռ ոգոստոսյան գործադուլից առաջ Թիֆլիսի կոմիտեյի հանձնարարությամբ զնաց Բագու աշխատելու և ոգոստոսին գործադուլի ժամանակ Թիֆլիսում ամենակին չի յեղել իսկ Սոսո Զուղաշվելին (Մտալին) գործադուլից անմիջապես հետո վոչ մի տեղ չի գնացել. Նա անցավ Բաթում միայն գործադուլից 14—15 ամիս հետո, 1901 թվի վերջում:

Նույն գրքույիի մեջ զետեղված են կոմիտեյի դեկտեմբերի 18.-ի և 23.-ի (1900 թ.) թոուցիկները, վորոնք գրված են «ինտելիգենտ-կոմիտետչիկների» («ուղորժունիստ» Ղարաջյանի, Կուռնասովսկու, Սկարնյակովի) ձեռքով: Իհարկե Մ. Յոլչյանը վոչ մի խոսք չե ասում, թե վորքան և այդ թոուցիկների բովանդակությունը համապատասխանում «ինտելիգենտ-կոմիտետչիկների ուղորժունիզմին»:

Ահա այսպիս են գրում պատմությունը*):

Ցեթե նկատի առնենք և այն հանդամանքը, վոր Լադո Կեցիսովելին սպանվեց Մետեխի բանտում 1903 թվի ամառը, ողոստոսի 17.-ին, յերբ ո. գ. կուսակցության մեջ գեռես գոյություն չունեյին բոլշեվիկյան և մեղմեկյան Փրակցիաները և «պատմաբան» Մ. Յոլչյանը այնուամենայինիվ, իր կուսակցական քաղաքական պարտքն և համարել իր գրքույիլը նվիրելու «Անդրկովկասի բունկիցմի տոաջին կազմակերպողներից և դեկտվարներից մեկի — Լադո Կեցիսովելու պայծառ հիշատակին», ապա ամեն ինչ հասկանալի յե դառնում:

Այսպես ուրեմն ընթերցողը պարզ տեսնում ե, վոր մեր յերկրի կուսակցական-քաղաքական շարժումների պատմությունն սկսել են գրել մարդիկը ավելի շուշ անգրագետ մանուկներ, վորոնք չգիտեն, թե յերբ են գոյություն ունեցել և մեռել նրանք, վորոնց «պայծառ հիշատակին» նվիրում են իրենց յերեկուի պատմությունները և կամ ավելի ուղիղ կլինի ասել — չգիտեն անզամ մեր կուսակցության Փրակցիաների ծագման տարեթիվը... **)

*) Ընթերցողը կարող ե գտնել Թիֆլիսի Շանկորի Զայն-ի 1920 թ. համարներում զետեղված իմ մեմորային հողածների մեջ նաև այն պայքարի նկարադիրը, վոր Թիֆլիսի կոմիտեն մը զում եր 1900 թվի աշնանը Զիբլաձիների գեմ:

**) Պետք ե ասել, վոր պատմական կուրիոզներ քիչ չեն պատահում նաև մեր թերթերում: «Սոցիալիստական մամուլին» նվիրված իմ մի հոդվածում («Խ. Հ. Տ. № 128» 1922) յես հիշել եյի, իմիշի այլոց, առաջին գրացելուն ո. գ. «Բրգձոլա» անլեզու թերթի հիմնադիր Լադո Կեցիսովելու անունը. գրան կից թերթի խմբագրությունը, ձև Յուլյան, հարկ եր համարել փակացձի մեջ ավելացնելու «բոլշևիկ» բառը:

Անցնենք այժմ՝ գրքույկում դետեղված պատկերների հարցին:

Ես այժմ ել շարունակում եմ պնդել վոր Շանթը (Մարտիրոս Միքաջյան) 1907 թվին կուսակցությունից արձակվեց Թիֆլիսի և դ. կոմիտեյի վորոշման հիման վրա: Նա, վորին յես ճանաչել եմ Մետեխի բանտում դեռ 1902 թվից, շատ լավ յերիտասարդ եր, «կրակոտ» հաղափոխական. Բայց ինչ կարող ես անել վոր 1905—1907 թ. թ. մեր մի քանի ուրիշ ընկերների պես այնքան տարվեց տերըրով և եքսերով, վոր վերջը յերևանցի Արամ Շուշանյանի և ընկ. հետ միասին նրա այդ «քաղաքական» գործունեյությունը հանգեց «շանտաժիստական» գործունեյության: Նրանք բանկերից սպանում եին կեղծ չեկերով (Արմավիր, Ռոստով) ահազին գումարներ և վատնում անձնական անվայել շուայլ քեֆերի վրա: Յերբ յես առիթ ունեցա մի որ պատահելու Շուշանյանին և Շանթին միասին, խիստ կշտամբանք հայտնեցի նրանց շանտաժիստական գործերի համար:

Նրանք ինձ պատասխանեցին.

«Մեր կատարած եքսերին ընկ. Ստ. Շահումյանը հավանություն ե տվել»:

«Անկարելի բան ե, ասում եմ, վոր ընկ. Շահումյանը հավանություն տար այնպիսի եքսերին, վորոնք շանտաժիստական բնույթ են կրում»:

Յեվ իրոք, յերբ Ստեփանը վերադարձավ Լոռունի համագումարից, յես նրան հայտնեցի այդ մասին, նա, սահտիկ վրդովվեց. «Դրանք լրբեր, սրիկաներ են, վորոնց պետք ե վոնդել կուսակցության շարքերից»: Դրանից հետո շատ չանցավ Շուշանյանը, Շանթը տսն զան-

ու վտարվեցին կուսակցության շարքերից: Մ. Յուչյանի առաջ բերած ընկ. ընկ. Քաթանյանի և Բորյանի վկայությունը թե նա «Խիզախ մաքուր հեղափոխական եր» կազ չունի հարցի հետ. մենք ամենքս կարծում ենքնք, թե նա լավ, անձնվեր հեղափոխական ե, բայց վերջը ուրիշ բան գուրս յեկավ: Հարցըրեք յերևանցի հին ընկերներին շանտաժի մասին, նրանք կհաստատեն այդ բանը: Զեք հավատում, ահա դարձյալ մի վկայություն. «Շանթը 1907—1908 տարիներին ընկավ խորթ ազգեցությունների տակ. մասնակցեց մի մասնավոր եքսպրոպրիացիայի (այսինքն՝ շանտաժ), Գ. Ղ.) և մեռավ Խարկովի բանտում» *): Այս «բաց բերան զրպարտությունն» անում ե վոչ «չարամիտ», «Նենգամիտ մենշևիկ» Ղարաջյանը, այլ բոլշևիկ Ասք. Մոռավյանը: Պարզ ե, թե նվազ ե «բաց բերան» զրպարտությունների սիրահարը: Հարկավոր եր հաստատագես ստուգել և վոչ թե թերեսոլիկությամբ գուրսդալ և հերքել մի բան, վոր անհերքելի իրողություն ե, իսկ ինչ վերաբերում ե այն բանին «թե Շանթը դատվեց Հավլաբարի հոչակավոր տպարանի գործով», յես այդ բանը չգիտեմ: Հավլաբարի տպարանի գործն ոկտվեց 1906 թվից, շատ կտրելի յե, վոր նա վորեն կազ ունեցել ե (Աինչե շանտաժը) հիշյալ տպարանի հետ կամ նրա վերաբերյալ վորեն վաստաթուղթ են գտել այնտեղ գործը Թիֆլիսի դատապահական պալատում քննվեց 1907 թվի վերջերը. յերբ յես անհերքավալ անցել ելի Ռուսաստանի քաղաքները: Քաղաքական գործը և շանտաժը միմիանց չեյին կարող խան-

*). «Ընկ. Մոռավյանի հիշողությունների ժողովածու», յերես 33, 34:

զարել, կարող եյին յերկու ըործը միացնել մեկին դատել:

Յես միայն այս կարող եմ ասել, վոր գտնվելով նույն տպարանի գործով մեղադրյալների թվում բանտում մեզ ամեն մեկիս բաժանած «մեղադրական ակտում» մեղադրյալների անունների շարքում յես չեմ կարողանում հիշել նաև Մարտիրոս Միքաքյանի (Շանթի) անունը:

Բայց ավելի հետաքրքրական ե իմանալ թե վրոնք են յեղել այս «համապատասխան կազմակերպությունները, վորոնց գիտությամբ Շանթը (գուցե և Արամ Շուշանյանը և ընկ., Գ. Դ.), ինչպես գրում ե Մ. Յոլջյանը, մասնակցել ե մի քանի եքսպրոպրիացիաների և տերրորիստական ակտերի»:

Յես առանձնապես շնորհակալ եմ Մ. Յոլջյանից, վոր ինձ հիշեցրեց «Հոսանքում» (№ 33, 1907 թ.) զետեղված իմ մի հողվածը «Եքսպրոպրիացիաների մասին»: Մոտ 28 տարի առաջ գրած այդ հողվածի տակ յես մինչև անգամ այսոր կարող եյի յիրկու ձեռքով ստորագրել: Թող ընթերցողը նեղություն քաշե կարդալու և յեթե ինքն անարխիստաերարիստ չե՝ դոնե այնտեղ մի բան, վորը հակառակ լինի մարքսիստական—բանվորական կուսակցության տակտիկային: Ա. դ. բանվորական կուսակցության համագումարները միշտ բացասաբար են վերաբերվել եքսպրոպրիացիաներին և անհատական տերրորիստական ակտերին: Առավելապես Ստոկհոլմի և Լոնդոնի համագումարների ուղղուցիւները այդ մասին վոչ մի կասկած չեն թողնում: Նույն իսկ 1920 թվին Վ. Ի. Լենինը հարկ է համարել այդ հարցը վերճշելու: Խոսելով իր «Դетская болезнь «ле-

ビツハイ» աշխատության մեջ, ի միջի այլոց, եսերական կուսակցության մասին, նա գրում ե. «այդ կուսակցությունն իր առանձին «հեղափոխականությունը» կամ «ձախությունը» նկատելի անհատական տերրոր, մահափորձեր կատարելու մեջ, վորը մենք մարքսիստներս վճռականապես ժխտել ենք» *): Սակայն Մ. Յոլջյանին ինչ փույթ, թե ինչ են հրահանգել մեր կուսակցության համագումարները, ինչ են գրել կամ ասել բանվոր գասակարգի լիդերներ-կենինը և ուրիշները. նա «հիվանդ և ձախությամբ», իսկ այդ որդանական հիվանդության գեմ վոչինչ կարելի չի անել:

Հիմա լսեցեք, թե ինչ ե գրում և նույնը մի քանի անգամ կրկնում Մ. Յոլջյանը: Վորպես թե իմ կողմից հավակնություն ե յեղել կամ անբավականություն նըկատվել այն բանի համար, վոր նրա գրքում հիշված չե յեղել «հայ արժանավոր ընկերների—մենշևիկների» կատարած գործը, նրանք անտես են արված յեղել և յես նկատել եմ հեղինակի կողմից «հայ բուրժուազիայի գերի նսեմացման» տեսդենց. ահա այս բոլորը շոշափել և պիմ անձնական և ազգային արժանապատվությունը» (ընդգծումն հեղինակինն ե. Գ. Դ.), ինձ սաստիկ վիրավորանք ե հասցըել, խախտել և իմ հանգիստը, վրդովեցըել և այն: Տեսնում եք ինչ բաներ են հոսում մեր «սույն պատմաբանի» գրչի տակից: Տարրինակ ե, սակայն, վոր ընկ. Ա. Հովհաննիսյանն ևս արձագանքելով իր պրոտեստելին՝ գրում ե այդ իմ անձնական արժանապատվության հասցըած վիրավորանքի» առիթով բառացի հետեյալը. «ամփափելով վարու օերրիտորիայի և վարու ժամանակաշրջանի մեջ՝ հեղինակը պար-

*) Տես Լениն-Соч. տ. XXV, 3-օւ ուժ. սր. 181

տավոր չի տեսել իրեն ծանրանալու Հայաստանի ռահմաններից դուրս գործող առաջին հայ մարքսիստների մատուցած ծառայության վրա, թեև միաժամանակ չի անդիտացել նրանց ունեցած ազդեցությունը Հայաստանի 1903—07 թվականների բանվորական շարժման վրա: Շատ հարգելի Դարաձյանի զգգոհությունը մարդկայնուն քննդառմը ամեն տեղ հոգվածազրինն ե. Գ. Դ.) հասկանալ կարելի յե հարկավա *):

Միթե խոսքը «առաջին հայ մարքսիստների ազգեցության» կամ «նրանց «մատուցած ծառայությունների» մասին ե յեղել՝ Նախորդ եջերում այդ հարցն արդեն բավականաշափ պարզված ե, այնպես վոր անդրադառնալ այստեղ այդ հարցին, յս ավելորդ եմ համարում: Յես ամեններն հավակնություն չեմ ունեցել, վոր Մ. Յոլյանները իմ և մյուս «արժանավոր ընկերների»: («մենշևիկների» ըստ Մ. Յոլյանի) հայ բանվորական գեմոկրատիային մատուցած ծառայությունները արձանագրելին իրենց «պատմությունների» մեջ: Վճ. մի այդպիսի առաքինություն, վորով ոժտված կարող են լինել ԵԿՊ(6.)-ի պատմագիրներ Գ. Նեվակին և ուրիշները կուսակցության իրենց գաղափարական հակառակորդների վերաբերմամբ, Մ. Յոլյաններից սպասելը, իհարկե, անմտություն կլիներ:

Իմ անցողակի նկատողությունը չեր վերաբերում «արժանավոր մենշևիկ ընկերներին» այլ այնպիսի բոլցեվիկ ընկերներին, վորոնք զբարում առաջ բերած մի քանի ընկերներից պակաս ծառայություններ չեն մատուցել: Յերեանի մասին խոսելիս ինչու վոչ մի հիշատակություն չկա ինտիլիգենտ ո. գ. բոլեմիկ Սեմենչենկոյի

*) Տես նրա նույն հոդվածը. «Մարտակոչ» № 68, 1927

(հարկային տեսուչ) մասին, վորն այդ ժամանակ Յերևանում ո. գ. ընկերների ժողովներում սեփերատմաներով և զրուցներով առանձնապես ոգտակար է հանդիսացել գործին: Ինչու վոչ մի խոսք չկա բոլումիկ Մ. Բագրատունու մասին («Փալանգուզ Մկա»), վորը գավառից թղթակցում եր մեր սոցիալիստական թերթերին, բոլցեվիկ կարգան Բաղրամյանի մասին, վորի զենքերի և ոռմբերի պահեստն եյին առաջին հերթին այցելու կենտրոնից յեղած բոլցեվիկ ընկերները: Այդ ընկերների վոչ թե միայն պատկերները չեն զետեղված, այլ նրանց անուններն անդամ չեն հիշված Մ. Յոլյանի զբքում: Այս բոլոր ընկերները «մենշևիկներ» չեն յեղել, այլ բոլցեվիկներ, վորոնց չեր կարելի աչքաթող աներ Սակայն Մ. Յոլյանը, չգիտեմ, ինչ հոգերի ազգեցության տակ նրանց և թի այդպիսի ընկերների անունները «մոռացել ե» կամ նրանց մասին տեղեկություն չե ստացել իր միակ ազրյուր — Սոկորվակուց

Չեն հիշված ամեններն Սարաջնի զավոդի աչքի ընկնող վրացի բանվորներ մարթումը և նեսոն և այլն ե այլն: Սրանք ամենքն ել ավելի արժանի եյին հիշատակության, քան շատ այնպիսիները, վորոնց պատկերներով զարդարել ե Մ. Յոլյանը իր գիրքը: Ասացեք, ինդիրեմ, գիտողութիւն չեմ միթե մի անհայտ բանվոր չաջի կափարի և այդպիսիների պատկերների զետեղումը, վորոնք իրանց ամբողջ կյանքում գուցեալ պատճառքար մի անգամ մասնակցել են անհան մի գործադրութիւն, մինչդեռ շատ ավելի գործունյա ընկերներ միանգամայն աչքաթող են արված:

Բացի իմ «անձնական արժանապատվությունը» շոշափած ե յեղել նաև իմ «ազգային արժանապատվությունը»

վությաւնը»: Ի՞նչ և նշանակում այդ: Նշանակում ե այն, վոր յեթե յես ասել եմ թե հայ բանվորական շարժումներն սկիզբն են առել Անդրկովկասի արդյունագործական կենտրոններում, այնտեղից պետք ե սկսեր պատմագիրն իր աշխատությունը և ապա թե անցներ նախկին Յերևանի նահանգի մի քանի գավառների (ներկա Հայաստանի տերրիտորիայի) շարժումներին և կամ յեթե ասել եմ, վոր յեփրոպացիների կապիտալի հետ միասին տեղական (հայ, թուրք) կապիտալը մեր յերկրում գերակշիռ դեր ե խաղացել, քան ուստական կապիտալը, ապա իմ գործածած այդ մի հատիկ «հայ» բառը («հայ բանվորություն», «հայ բուրժուազիա» և այլն) իրավունք ե ավել Մ. Յոլչյանին «նացիոնալիստ» և չգիտեմ ել ինչ հայտարարելու ինձ: Չես հասկանում թե ինչ տեսակ մտքերի քառսի մեջ ե դեգեղում մեր այս տարօրինակ գրչակը: Միթե չի կարելի գործածել «վրացի ազնվականություն», «ուստաղնվականություն» կամ »հայ բուրժուազիա» «ֆրանսիական, ուստա, անգլիսկան և այլն բուրժուազիա» և կամ «հայ բանվորություն», «լեհ, ֆին, ուստ բանվորություն» և այլն և այլն: Սրա համար մեկին «նացիոնալիստ» անվանել կարող ե միայն քաղաքական մասնուկը:

Իրոք «հայ» բառը շատ անգամ այնքան ե խըրտնեցրել իրենց «ինտերնացիոնալիստ» հորջորջով մեր «տիրացու սոցիալիստներից» շատ շատերին, վոր բառ, վական և յեղել հենց միակ այդ բառը հանձեր, վոր նրանք ընկնելին իստերիկայի մեջ: Հենց այդ տեսակ իստերիկներից մեկն ե և Մ. Յոլչյանը:

Նա իր առաջարանի վերջում ուղղում ե մի քանի

«կծու» տողեր նաև Մ. Խանոյանին և մի ուրիշին (վորի անունը տալն այսոր ամոթ պետք ե համարել), վորովհետև նրանք ես իր ժամանակին բացասարար եյին վերաբերվել Մ. Յոլչյանի աշխատությանը, վոր պես սպիցի Փիլիպ ուղղությամբ ներշնչված մի աշխատության:

Զարմանալի յե, վոր Մ. Յոլչյանը խոսում ե տարրական պատասխանավության մասին հիշյալ անձանց նկատմամբ, սակայն ինքն ունի արդյոք այդ տարրական պատասխանավության զգացմունքը, վորն ամեն մի համեստ և ազնիվ մարդ պարտավոր ե ունենալ: Վոչ, նրա ապլոմբը, անհամեստությունը, մեծամտությունը չափ ու սահման չեն ճանաչում: Նա իր «նշանավոր» առաջարանը վերջացնում ե և ա Մարքս «մեծ Ֆլորենտացու» հանրածանոթ բացականչությամբ. «segui il tuo corso e lascia dir le genti» (գնա քո ճանապարհով՝ թող ինչ վոր ուզեն մարդիկ ասեն):* Միթե յես ճշմարիտ չեյի ասում, վոր Մ. Յոլչյանը ձգտում ե իր աշխատությունը գիտական աշխատության տեղ անցկացնել:

Ապլոմբը, ծիծաղելին, ուղղակի սպանում են նրան: Ի՞նչ յեղակացության կարելի յե գալ այն բոլորից հետո, ինչ վոր գրեցի նրա գրքի մասին:

Նախ քան այդ հարցին պատասխանելը, յես պետք ե ասեմ հետեւյալը.

Դիրքը լույս տեսնելուն պես իսկույն հեղինակը 1924 թ- նրա մի որինակը հարկ եր համարել ուղարկել ինձ իմ անձնավորությանն ուղղած գովասանական, շո-

Տես Կ. Մարքս «Կապիտալ» 1-ին հատուր, առաջարան:

յող մի նամակի հետ միասին: Թեթև աչքի անց-
կացնելուց հետո, յես նրան այդ առիթով մասնավոր
յերկար նամակով հաղորդեցի ամենայն անկեղծու-
թյամբ իմ ուրախությունն և գոհունակությունը և թե
այն տպագորությունները, զոր յես ստացել եյի գրքի
թուրցիկ ընթերցումից: Սակայն հետագայում գիրքն
առանձին ուշագրությամբ կարգալուց հետո, յես նկա-
տեցի նրանում խոշոր թերություններ, վորոնց մասին
հարկ համարեցի քննադատական գրելու «Խորհրդա-
յին Հայաստան» թերթում: Թերությունների հետ մի-
ասին յես մատնանշեցի և նրա արժանիքները, հանձ-
նարարելով այդ աշխատությունը ընթերցող հասարա-
կության վլորպես իր տեսակի մեջ վողունելի և
և խրախուսանքի արժանի առաջին փորձ»: Այսուհետեւ
յես մնում եյի լավատես նրա հեղինակի վիրաբերմամբ:
Սակայն հետագայում նրա գրական մի քանի քայ-
լերը և մանավանդ նրա յերկրորդ անգամ գրեթե
նույնությամբ հրատարակված գիրքն իր նոր առաջա-
րանով՝ ինձ համոզեցին, զոր նրանից բարեխիղճ, լուրջ
պատմություն գրող չի դուրս գա: Նա շատ բանվ
նման և Վրաստանի «պատմություններ» թխող Սե-
վաստյան Տալակվածեյին, Յերկուսն ել միատեսակ
հիվանդությամբ և ցավով են բռնված: Յեթե յես
փորձեյի նրանց ապշեցուցիչ նմանության բոլոր
գձերն այստեղ առաջ բերել զրա համար հարկավոր
կլինիկ աշխատությունն դարձյալ մի քանի յերեսներով
ծանրաբեռնել. չարժե աշխատանք և ժամանակ վատ-
նել դրա համար:

Կյանքի մեջ չկտ մի մարդ, զոր մի բանի պետքա-
կան չլինի: Պատմագիր լինելու, հասարակական-քաղա-

քական պատմություններ գրելու համար հարկավոր ե
ունենալ մեծ պատրաստություն, ձիռնասու-
թյան և պատրաստանատվության զգացմանը, վրոն-
ցից սիանգամայն գուրկ և Մ. Յոլյանը: Նա կարող ե
միայն «նյութեր հավաքող» լինել, ձեռնահաս մարդ-
կանց ղեկավարության տակ արխիվսերում սկ աշխա-
տանք կատարել: Իսկ պատմական նյութերի աեղին
ոգտագործումը, գիտական կլասիֆիկացիան և զրա հի-
ման վրա պատմական «որյեկտիվիզմի» իդեոլոգիական
խիստ հետևողականության նշանի տակ հասարակա-
կան-քաղաքական պատմություն գրելն ընդհանրապես
հմուտ, ձեռնահաս, բազմակողմանի զարգացած մաս-
նագետների գործը պետք ելինի և զոչ թե քաղաքա-
կանապես անգրագետ Մ. Յոլյանների գործ:

Այս և իմ անհողողղ կարծիքը Մ. Յոլյանի և
նրա գրքի մասին. ուրիշ կարծիք չի կարող ունե-
նալ փոքր իշտե բարեխիղճ մի պատմագետ:

Հունվար, 1931 թ,

Թի Ֆ Լի ս:

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՏՊԱԳՐԱԾՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Յելբոպայում
և Ռուսաստանում, Թիֆլիս, 1894 թ.
2. «Փուչ զավակ» դրամ 5 դրժ., Թիֆլիս, 1905 թ.
3. «Рабочее движение и социалдемократия на Кавказе» с предисловием Г. В. Плеханова. I изд. Женева, 1910 г.
II „ (Гиз) Москва, 1923 г
4. Նույնը հայերեն, Պետքատ, Յերեան, 1929 թ.
5. «La guerre mondiale et le socialisme», Լազո-դը-Փոն (Շվեյցարիա), 1915 թ
6. «Անցյալի հ/շողություններից», 1918 թ.
7. «Անդրկովասի քաղաքական կյանքը 1918 թվին», Թիֆլիս, 1919 թ.
8. «Записки революционера» № 1, непериодич. издание,
Тифлис, 1920 թ.
9. «Материалы по истории отпадения Закавказия от России»
I изд. «Красная книга», Тифлис, 1923 թ.
II „ «Госиздат. Грузии», „ 1931 թ.
10. «Բայց և այնպես նա շարժվում է», դրամ 4 դրժ., Թիֆլիս 1925 թ.
11. «Արտեմ Մոլոմնովի Դոլմաղովը բանտում, արագի-Կոմիդիա»
2 դրժ., Թիֆլիս, 1926 թ
12. «Հայ անդրանիկ հեղափոխական խմբաւը Կովկասում»,
«Զակինիքա», Թիֆլիս, 1927 թ
13. «Первая группа революционеров армян на Кавказе»,
թարգմանություն հայերենից, «Զակինիքա», Թիֆլիս 1929 թ
14. «Մուշեն Խանազարի հերթափնտերը», բանակը «Հնչական
կուսակցության» մասին, Թիֆլիս, 1928 թ
15. «За рубежом», исторические заметки, Тифлис, 1929 թ.

16. «Անդալը և նըա վեպերը», քննադատական վերլուծություն
Գետհրատ, Թիֆլիս, 1930 թ.
17. «Ռւյժ և բռնություն» (հեղափոխական տակտիկայի հարցի
մասին) Գ. Վ. Պետանովի, թարգմանություն ոռուերենից,
Թիֆլիս, 1930 թ.
18. «Կուսակցական-քաղաքական մոլորությունների ձիրաններում»
(Մ. Յուչյանի «1903—1907 թ. թ. Հայաստանի բանվորական
շարժ և պամությունից» դրաֆի առթիվ)

ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Բաց նամակ Արտաշես Կարինյանին», բնդարձուկ պատասխան
նրա «Բազմակցությունը և իր զինակիցները» գրքի առթիվ.
2. «Мировая война и социализм», Франанская
журналы 1903—1907 թ.թ. Հայաստանի բանվորական
шարժ և պամությունից» դրաֆի առթիվ
3. «Были-ли «месамедасисты» марксистами?», Առողջեւն,
նույնը և հայերեն:
4. «Նոր հյանքի համար» գրամա 4-դր.,
1905 թ. հեղափոխության շրջանից.
5. «Մեմորանիք», պատրաստ հն առ-
ողջամ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ,
մասերը
6. «Հետազարձ հայացք», 15-ամյա
շրջան (1886—1900) (պատմական
հետազոտություն կոմմնտարխաներով»

«Մեմորանիքը» և
«Հետազարձ հայացքը
աշխատությունները
գտնվում են «Մար-
քսիզմ—Լենինիզմի
ինստիտուտի» տրա-
մադրության տակ:

Հեղինակի հանցեն՝

Երևան, 2-օդ Գնունի № 23, 8-այ պուրական շենքում

«Ազգային գրադարան



NL0209014

ԳԻՒԸ 1 ԱՆՔ.